

1543

Chickadee G. junco
July 8. 1888

2(075)

11-15

03 AUG 2009

6036


1914 № 2450

~~0322~~

ԳՈՐԾԻ

ԱՌԱՔԵԼՈՑ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕДЕНИЯ
Академии Наук
СССР



2(075)
U-15

ՀԱՅ Ը. ՔՀ. ՍՈՆՈՑԵՆՆԵՐ

Յ

SEP 10 2 51

9. sup.

ԳՈՐԾՔ

ԱՌԱՔԵԼՈՑ

աշխատասիրեց

Սահակ ա. Բահանայ Սահակեանց

þ þ ð ı þ u

Տպարան «Էսպերանտո» Ելիզաւետ. № 17
1914

1914

ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Ի ՀԱՅՐԵՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԵՈՐԳԱՅ Ե.

Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարքի Համազգական Եպիսկոպոսի Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Աթոռոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի:

Ըստ հրամանի՝ Սրբազնագոյն Քահանայապետի ազգիս՝ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՄԿՐՏՁԻ Ա. զձեռագիրս Սրբազան պատմութիւն Նոր-Ուխտի Գործք-Առաքելոց յակնարկեալ՝ ոչինչ գտի 'ի սմա հակառակ ընազրին եւ ուղղամիտ վարդապետութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցոյ:

ՍՈՒՔԻԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՁԵԱՆՅ

Ի 20 նոյեմբերի 1895 ամի
Ի Սուրբ Էջմիածին



ՅԱՌԱՋԱՐԱՆ

Զմոռացուած խոստումս կատարում եմ այսօր՝ հրատարակելով սրբազան պատմութեան երրորդ հատորը—«Գործք Առաքելոց»-ը, բայց առ այժմ աշակերտական մասը միայն: Այն սկզբունքները, որոնք ես ընդունել եմ նախկին երկու հատորները հրատարակելիս, նոյնը և սրա մասին է—որ ամենաընտիր դասագիրը հէնց բնագիրն է, Սուրբ Գիրքն է: Այն արգելքները, որոնք Հին և Նոր-Ուխտի վերաբերմամբ յիշուած են անցեալում, թէ ինչու բնագիրը չէ տրուում սաների ձեռք, անփոփոխ է և այստեղ:

Մեր մէջ լոյս տեսած սրբազան պատմութիւնները սովորաբար երկու հատորի մէջ են ամփոփուած—Հին և Նոր-Ուխտ: Նորը պարունակում է իւր մէջ աւետարանները, իսկ Գործք Առաքելոցը հարեանցի կերպով՝ իբրեւ մի յաւելուած, աւելացրած են դասագրերի վերջը:

Ես այդ նիւթը՝ Գործք Առաքելոցը առանձին հատոր եմ կազմել, որովհետեւ անհրաժեշտ եմ համարել նրան ի մասնաւորի ուսանելը—հեթանոսների առաքեալ Պաւղոսին պէտք է լաւ ճանաչել: Նա՛ որ այնքան զգուշութեամբ, հոգատարութեամբ է վարուել մանուկ քրիստոնէութեան հետ. նա՛ որ տքնել է Քրիստոսի վարդապետութեան էութիւնը պարզաբանելու աշխարհին. նա՛ որ այնքան պատեհաբանութեամբ է մղել քրիստոնէութիւնը սխալ ըմբռնող հակառակորդների դէմ. նա՛ որ աստուածային ուսումնային աստիճան պարզաբանել է թէ՛ տեսականապէս և թէ՛ գործնականապէս, որ մարդկային ըմբռնողութեան հասկանալի է կացուցել—կարճ՝ նա, որ ուսուցել է մեղ թէ ի՞նչ է քրիստոնեայ ասածդ, ի՞նչ է օրէնք, աւետարան, յանցանք, պատիժ, շնորհք, հաւատ, արդարութիւն, Քրիստոս, Աստուած, բարի գործ, սէր, յոյս, խաչ... այս նիւթը մասնաւոր ուշադրութեան պիտի արժանանայ քրիստոնեայ դիպրոցներում, ևս առաւել այն ուսումնարաններում, ուր


հոգեւոր հովիւներ են պատրաստուում: Վկայուած կարծիք է, որ եթէ Պօղոսը չէր եղել, քրիստոնէութիւնը հրէութեան մէջ կուլ կգնար—քրիստոնէութիւնը մի տեսակ հրէութիւն էր ըմբռնուում: Պօղոսն էր միայն, որ ճիշտ էր հասկացել Փրկչի երկնային վարդապետութիւնը: Պօղոսն էր, որ քրիստոնէութիւնը հրէութեան սահմանափակ՝ նեղ շրջանից հանեց և նրան համաշխարհային կրօնի կերպարանք տուաւ: Այս պաածառով էլ քրիստոնեայ սաները պէտք է ի մօտոյ տեղեկանան պօղոսեան ըմբռնողութեան եղանակի հետ: Մեր դասագրերն ըստ մեծի մասին Պօղոսի կենսագրութիւնն են աւանդում, շատ քիչ անգամ հետամուտ լինելով տասներեքերորդ առաքելի քրիստոնէական հայեացքներին: Ահա այս թերին լրացնելու դիտաւորութեամբ՝ ես անջատեցի նիւթը և առանձին հատոր կազմեցի, որպէսզի սաներին հնար լինի ծանօթացնել այն առաքելի գործերի հետ, որ իրաւամբ պարծենում էր միւսների առաջ, թէ ինքը միայնակ ամենից աւելի է գործել:

Նիւթի ընտրութիւնը և ստորաբաժանումներն աւելի պարզ կլինեն, երբ միջոց կլինի սրա ուղեցոյցը հրատարակելու: Գործք Առաքելոցը կարելի է աւանդել համառօտ կերպով ծխական դպրոցների հինգերորդ բաժանմունքում Նոր-Ուխտից ետոյ: Թեմական դպրոցներում չեն սխալուի, եթէ երրորդ դասարանի առանձին նիւթ որոշեն, իսկ գիմնադիւաներում՝ ծրարով որոշած դասարաններում: Պօղոսեան հայեացքի իրական ըմբռնումը ուղեցոյցը հրատարակելուց ետոյ միայն հասկանալի կլինի:

Վերջացնելով խօսքս՝ կցանկայի, որ այս գրքոյկը ևս նոր բարեկամներ շահէ, իսկ հներին իրենց հաւատոյ մէջ ամուր պահպանէ:

ՍՍՀԱԿ Ա. ՔՀ. ՍԱՀԱԿԵԱՆՅ

Տփլիս: 1910



ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԻՄՆՈՒԵԼ

I

ԱԿԵՏԱՐԱՆԻ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ
ՊԱՂԵՍՏԻՆՈՒՄ

1. ՀՈԳԵԳԱՆՈՒՄՏ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
ՀԱՄԱՅՆՔԸ


30 թ.



ա. Հոգեգալստեան տօնի հրաշքը

Եր Յիսուս երկինք համբարձաւ Ձիթենեաց լերան վրայից, առաքեալները երուսաղէմ դարձան և սպասում էին Սուրբ Հոգւոյ գալստեանը: Համբարձումից տասն օր անց, որ Պենտէկոստէ էր կոչւում, այսինքն Չատկից

յիսուսն օր ետոյ, առաւօտեան դէմ յանկարծ երկինքը որոտաց, սաստիկ քամի բարձրացաւ, լըցուեց այն սուներ, ուր առաքեալները սպասուած էին և ամեն մինի գլխի վրայ կրակէ լեզուներ երեւաց: Առաքեալներն իսկոյն Սուրբ Հոգւով



լցուեցան և սկսեցին զանազան լեզուներով խօսել: Ուրիշ երկրներից շատ երկիւղած հրէաներ Նրուսաղէմ ուխտ էին եկել: Երբ երկնքից իջնող ձայնը լսեցին, վազեցին առաքեալների մօտ և տեսան, որ ամենքն էլ զանազան լեզուներով էին խօսում—մէկը պարսկերէն, միւսը պարթև-

երէն, երրորդը հրովմայեցւոց լեզուով, չորրորդը արաբերէն...: Այս բանի վրայ ժողովուրդը շատ զարմացաւ և իրար ասում էին. «Չէ՞ որ սրանք բոլորն էլ գալիլիացիներ են, տեսէք ինչպէս մեր լեզուներով խօսում և պատմում են Աստծու մեծամեծ գործերը, այս ինչ պիտի լինի»: Ոմանք էլ ծաղր անելով՝ ասում էին. «Սրանք հարբել են»:

բ. Հոգեգալստեան տօնի քարոզը

Այն ժամանակ Պետրոսը միւս առաքեալների հետ պատասխան տուաւ նրանց և ասաց. «Ով հրէաստանցիներ և Նրուսաղէմում բնակուողներ, լաւ լսեցէք ասածներս, մենք հարբած չենք, որովհետեւ դեռ ևս առաւօտեան ժամի երեքն է (մեր ժամի 9), այս ժամին սովորաբար մարդ գինի չէ խմում: Մենք հագուով Սրբով լցուած ենք, ինչպէս որ Աստուած Յովելիա մարգարէի բերանովն էլ ասել է. «Իմ հոգին կիջնէ ձեզ վրայ և դուք կմարգարէանաք»: Ետոյ խօսքը Յիսուսի վրայ դարձնելով՝ ասաց. «Լսեցէք, ով իսրայէլացիներ, Յիսուս Նազովրեցուն Աստուած աշխարհ ուղարկեց. նա ձեր մէջ շատ հրաշքներ գործեց և ապացուցեց, որ ինքը ճշմարիտ Մեսսիան է, իսկ դուք առաք, փայտի վրայ թաշեցիք նրան, բայց Աստուած նրան յարութիւն տուաւ, երկինք համբարձաւ և այնտեղից մեզ

համար Սուրբ Հոգին ուղարկեց, որի նշանն ար-
դէն դուք տեսնում էք մեզ վրայ: Լաւ իմացէք,



«ով իսրայէլացիներ, որ ձեր սպասած ճշմարիտ
Մեսսիան՝ հէնց այն Քրիստոսն էր, որին դուք
խաչեցիք»:

Ժողովուրդը, երբ այս քարոզը լսեց, զղջաց:
Նրանցից շատերը գալիս էին Պետրոսի և միւս
առաքեալների մօտ ու ասում էին. «Ի՞նչ ա-
նենք»: Պետրոսն էլ պատուիրում էր նրանց.
«Ապաշխարեցէք և մկրտուեցէք Յիսուս Քրիս-
տոսի անունով, ով կմկրտուէ, Սուրբ Հոգւոյ
պարգևը կընդունէ»: Պետրոսի քարոզից ետոյ ե-
րեք հազար հոգի մկրտուեցան:

գ. Հոգեգալստեան տօնի համայնքը

Հաւատացեալները չէին հեռանում տաճարից,
այլ միշտ լսում էին առաքեալների քարոզները:
Իմ և բո ասած բանը նրանց մէջ չկար, ամեն
բան հասարակաց էր: Հարուստները ծախում էին
իրանց կայքը և նրանով էին հոգում աղքատնե-
րի կարիքները: Աղօթքի ժամանակ ամեն օր տա-
ճարում միասին էին լինում և հացը միասին ու-
տում — աղքատ և հարուստ օրհնում, փառաբա-
նում էին Աստծուն: Աստուած առաքեալների
ձեռով շատ հրաշքներ էր գործում, ժողովուրդը
յարգում էր նրանց: Հաւատացեալները օրէցօր
աւելանում էին:

2. ԿԱՂԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ, ԱՌԱՋԻՆ ՀԱՆՍՏԱՆՔ
ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ԴԷՄ

ա. Առաքեալների գործած հրաշքը
Մի անգամ Պետրոսը և Յովհաննէսը երեկո-

յեան իննը ժամին տտճար գնացին աղօթելու։ Տաճարի Գեղեցիկ կոչուած դռան առաջ ի ծնէ մի կաղ էր նստած և անցուդարձ անողներէից ուղորմութիւն էր խնդրում։ Կաղը երբ տեսաւ առաքեալներին, ուղորմութիւն խնդրեց նրանցից։ Պետրոսը և Յովհաննէսը նայեցին նրան և սասացին. «Մեզ նայիր»։ Կաղը նրանց նայեց և յոյս



ունէր մի բան ստանալու։ Այն ժամանակ Պետրոս առաքեալն ասաց. «Ես արծաթ և ոսկի չունեմ, այլ կտամ քեզ այն, ինչ որ ունեմ՝ Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունով վեր կաց և գնա»։ Այս ասաց, հիւանդի ձեռից բռնեց և բարձրացրեց։ Կաղը բժշկուեցաւ, սա ևս նրանց հետ տաճար գնաց, շնորհակալութիւն էր անում և

փառք տալիս Աստծուն։ Ժողովուրդը տեսաւ կաղին մանգալիս և Աստծուն փառաբանելիս։ Ամենքը ճանաչում էին նրան, որ սովորաբար նստում էր տաճարի Գեղեցիկ կոչուած դռան առաջ։ Աղօթքից ետոյ կաղը չէր հեռանում Պետրոսից և Յովհաննէսից՝ մինչև որ դուրս եկան Արտաքին գաւիթը՝ որ կոչւում էր Սողոմոնի սրահ։ Ժողովուրդը խոնուեց նրա շուրջը և զարմանում էր։

բ. Պետրոսի քարոզը

Այս զարմանքը փարատելու համար Պետրոսն ասաց. «Ո՛վ իսրայէլացիներ, ինչո՞ւ էք զարմանում, կարծում էք թէ մեր զօրութիւնով բժշկեցինք կաղին։ Մեր Պապերի՝ Արրահամի Իսահակի և Յակովբի Աստուածը փառաւորեց իւր որդի Յիսուս Քրիստոսին, որին դուք մատնեցիք և ուրացաք Պիղատոսի առաջ։ Պիղատոսը դատեց՝ արդար գտաւ նրան և կամեցաւ արձակել, բայց դուք նրան ուրացաք և նրա փոխանակ խնդրեցիք, որ մի մահապարտ շնորհեն ձեզ։ Դուք սպանեցիք կեանքի առաջնորդին, որին Աստուած մեռելներից յարութիւն տուաւ և որին մենք վրկայ ենք։ Այն հաւատը, որ դուք ունէիք դէպի Յիսուս, թէ նա Իսրայէլի փրկիչն է, այսօր՝ այս ձեր ճանաչած կաղի բժշկութիւնովը, հաստատեց։ Այն հաւատը, որ այս հիւանդի մէջ ծա-

գեց դէպի Քրիստոս՝ հէնց նա էլ իրան բժշկեց ձեր աչքի առաջ: Գիտեմ Յիսուսին հասցրած ձեր չարութիւններն անգիտութեամբ են կատարուել, բայց Աստուած ինչ որ առաջուց մարգարէների բերանով յայտնել էր, թէ Յիսուս պիտի չարչարուէ, բոլորն էլ կատարեց: Ուրեմն զղջացէք և դարձի եկէք, որ ձեր գործած մեղքերը ներուեն»:

գ. Հարցուսիրձ եւ վկայութիւն

Երբ առաքեալներն այսպէս խօսում էին ժողովրդի հետ, վրայ հասան քահանայապետները, տաճարի իշխանները և սաղուգեցիները՝ երկուսին էլ բռնեցին ու բանտարկեցին մինչև առաւօտ: Այս քարոզութեան հետևանքն այն եղաւ, որ այդ օրը հինգ հազար հոգի հաւատացեալ դարձան: Առաւօտեան Աննա և Կայիափա քահանայապետների առաջ ժողով արին, առաքեալներին էլ այնտեղ բերեցին և սկսան հարցնել, թէ ո՞ւմ զօրութիւնով կամ անունով են կաղին բժշկել: Այն ժամանակ Պետրոսը Սաւրբ Հոգւով լցուած՝ ասաց. «Ո՛վ ժողովրդի իշխաններ և իսրայէլի երեցներ, այս ինչ բան է, մենք այսօր մեղադրւում ենք լոկ այն պատճառով, որ մի հիւանդ մարդու բժշկել ենք Յիսուս Քրիստոսի անունով, որին դուք խաչեցիք, բայց Աստուած յարութիւն տուաւ նրան»: Հրէից իշխանները

տեսնելով Պետրոսի և Յովհաննէսի համարձակ և խորիմաստ խօսքերը՝ զարմանում էին, որովհետև սրանց ճանաչում էին իբրև ուսուցիչ, տգէտ մարդիկ: Կաղը որ 40 տարեկան մարդ էր՝ այնտեղ կանգնած էր, նրա ներկայութեամբ ոչինչ չասացին, ուստի հրամայեցին առաքեալներին ատենից դուրս գնալ, իսկ իրանք խորհուրդ արին և ասացին. «Ի՞նչ անենք այս մարդկանց, երուսողէմացիներին բոլորին էլ յայտնի է, թէ սրանք ինչպիսի հրաշք գործեցին, այդ մենք չենք կարող ծածկել: Որպէսզի ժողովրդի մէջ չտարածուի, կանչենք դրանց, պատուէր տանք, սաստենք, որ Յիսուսի մասին այլ ևս ոչինչ չխօսեն»: Կանչեցին և այդպէս էլ պատուիրեցին: Իսկ Պետրոս և Յովհաննէսը պատասխան տուին և ասացին. «Մի՞թէ կարելի բան է, որ Աստուծո հրամանը թողնենք և ձեզ լսենք, չենք կարող մեր տեսածը և լսածը չքարոզել»: Ճարահատած՝ սպառնացին և արձակեցին: Պետրոսը և Յովհաննէսը եկան և պատմեցին այս ամենը միւս առաքեալներին և հաւատացեալներին: Ամենքը փառք տուեցին Աստծուն: Վերջը միասին աղօթք արին և խնդրեցին Աստծուն, որ իրանց ոյժ և կարողութիւն տայ Քրիստոսի աւետարանը համարձակութեամբ քարոզելու և նոյնը հրաշքներով հաստատելու: Իբրև նշան՝ թէ նրանց աղօթքը լսելի է եղել, շարժուեցաւ այն տեղը,

գեց դէպի Քրիստոս՝ հէնց նա էլ իրան բժշկեց ձեր աչքի առաջ: Գիտեմ Յիսուսին հասցրած ձեր չարութիւններն անգիտութեամբ են կատարուել, բայց Աստուած ինչ որ առաջուց մարգարէների բերանով յայտնել էր, թէ Յիսուս պիտի չարչարուէ, բոլորն էլ կատարեց: Ուրեմն զղջացէք և դարձի եկէք, որ ձեր գործած մեղքերը ներուեն»:

գ. Հարցուիրձ եւ վկայութիւն

Երբ առաքեալներն այսպէս խօսում էին ժողովրդի հետ, վրայ հասան քահանայապետները, տաճարի իշխանները և սադուգեցիները՝ երկուսին էլ բռնեցին ու բանտարկեցին մինչև առաւօտ: Այս քարոզութեան հետևանքն այն եղաւ, որ այդ օրը հինգ հազար հոգի հաւատացեալ դարձան: Առաւօտեան Աննա և Կայիափա քահանայապետների առաջ ժողով արին, առաքեալներին էլ այնտեղ բերեցին և սկսան հարցնել, թէ ում գորութիւնով կամ անունով են կաղին բժկել: Այն ժամանակ Պետրոսը Սաւրբ Հոգւով լցուած՝ ասաց. «Ո՛վ ժողովրդի իշխաններ և խորայէլի երեցներ, այս ինչ բան է, մենք այսօր մեղադրւում ենք լոկ այն պատճառով, որ մի հիւանդ մարդու բժշկել ենք Յիսուս Քրիստոսի անունով, որին դուք խաչեցիք, բայց Աստուած յարութիւն տուաւ նրան»: Հրէից իշխանները

տեսնելով Պետրոսի և Յովհաննէսի համարձակ և խորիմաստ խօսքերը՝ զարմանում էին, որովհետև սրանց ճանաչում էին իբրև ուսմիկ, տգէտ մարդիկ: Կաղը որ 40 տարեկան մարդ էր՝ այնտեղ կանգնած էր, նրա ներկայութեամբ ոչինչ չասացին, ուստի հրամայեցին առաքեալներին ատենից դուրս գնալ, իսկ իրանք խորհուրդ արին և ասացին. «Ի՞նչ անենք այս մարդկանց, երուսաղէմացիներին բոլորին էլ յայտնի է, թէ սրանք ինչպիսի հրաշք գործեցին, այդ մենք չենք կարող ծածկել: Որպէսզի ժողովրդի մէջ չտարածուի, կանչենք դրանց, պատուէր տանք, սաստենք, որ Յիսուսի մասին այլ ևս ոչինչ չխօսեն»: Կանչեցին և այդպէս էլ պատուիրեցին: Իսկ Պետրոս և Յովհաննէսը պատասխան տուին և ասացին. «Մի՞թէ կարելի բան է, որ Աստծու հրամանը թողնենք և ձեզ լսենք, չենք կարող մեր տեսածը և լսածը չքարոզել»: Ճարահատած՝ սպառնացին և արձակեցին: Պետրոսը և Յովհաննէսը եկան և պատմեցին այս ամենը միւս առաքեալներին և հաւատացեալներին: Ամենքը փառք տուեցին Աստծուն: Վերջը միասին աղօթք արին և խնդրեցին Աստծուն, որ իրանց ոյժ և կարողութիւն տայ Քրիստոսի աւետարանը համարձակութեամբ քարոզելու և նոյնը հրաշքներով հաստատելու: Իբրև նշան՝ թէ նրանց աղօթքը լսելի է եղել, շարժուեցաւ այն տեղը,

ուր ժողովուրդ էին: Ամենքը Սուրբ Հոգևով լրացուեցան և Աստծու խօսքը համարձակութեամբ էին քարոզում:

դ. Տառներկու առաքելները բարձ. աստեղի առաջ

Առաքելները բազմաթիւ հրաշքներ էին գործում ժողովրդի մէջ: Հաւատացեալներն ամենքը միասին Սողոմոնի սրահումն էին, իսկ որոնք դեռ ևս չէին պատկանում հաւատացեալների խմբին, չէին վստահանում մտնել նրանց մէջ: Ժողովուրդը սուրբ էր համարում այս միաբանութիւնը: Հաւատացեալների թիւը քանի գնում, բազմանում էր: Շատերը հիւանդներին պատգարակներով բերում և դնում էին այն ճանապարհի վրայ, որտեղից Պետրոսը պիտի անցնէր, որպէսզի նրա շուքը հիւանդի վրան ընկնէ և բժշկէ: Ոչ թէ միայն Երուսաղէմից, այլ և շրջակայ քաղաքներից հիւանդներ էին բերում առաքելների մօտ, որոնք ձեռք էին գնում նրանց գլխին և բժշկում էին: Այս հրաշքները տեսնողներից շատերը հաւատում էին Քրիստոսին. մի տեսակ յարգանք էին զգում դէպի առաքելները և չէին վստահանում փնասել նրանց: Բայց քահանայապետը և սադուգեցիները սաստիկ նախանձից դրդած՝ այլ ևս չկարողացան համբերել, բոլոր առաքելներին բռնել տուին և օրը ցերեկով բանտ դրին:

Աստծու հրեշտակը գիշերով բանտի դռները բաց արաւ, դուրս հանեց նրանց և ասաց. «Լուսը բացուելուն պէս գնացէ՛ք տաճարը և քարոզեցէ՛ք յարուցեալ Յիսուսի մասին»: Առաքելները տաճար գնացին և քարոզում էին: Քահանայապետն առաւօտեան վաղ ժողով կազմեց, մարդուղարկեց բանտը, որ առաքելներին ատեան բերէն: Սրանք գնացին և բանտում մարդ չգլուխելով, դարձան և յայտնեցին. «Գնացինք և տեսանք բանտը ամենայն զգուշութեամբ կողպուած, պահապանները դռան մօտ հսկում էին, դուռը բաց արինք և ոչ ոք չգտանք ներսը»: Երբ քահանայապետը և տաճարի իշխաններն այս խօսքերը լսեցին, զարմացան և ասում էին՝ սա ի՞նչ բան է»: Մի մարդ էլ եկաւ և ասաց. «Ձեր բանտարկած մարդիկը տաճարում քարոզում են»: Իշխանը սպասաւորների հետ տաճար գնաց և առաքելներին՝ առանց բռնութեան, ետ բերաւ, որովհետեւ երկիւղ էին կրում ժողովրդից, որ չքարկոծէ իրանց: Երբ նրանց ատեան բերին, քահանայապետն ասաց. «Ձե՛ք որ ձեզ պատուիրեցինք՝ Յիսուս Քրիստոսի անունով այլ ևս չքարոզել. ամբողջ Երուսաղէմը ձեր աղանդով լցրիք, հիմա էլ ուզում էք մեզ մարդասպան դուրս բերել»: Պետրոսը միւս առաքելների հետ պատասխան տուաւ և ասաց. «Աստծուն աւելի պէտք է հնազանդենք քան թէ մարդոց»: Այսպիսի համար-

ձակ խօսքերով վկայեցին Յիսուս Գրիստոսի մասին և նրանց անօրէն վարմունքները երեսներին տուին, այնպէս որ այս բաները լսելով՝ աւելի բարկացան և որոշեցին սպանել առաքեալներին:

Գամաղիէլ անունով մի փարիսեցի, որ հմուտ օրէնսգէտ էր և համակրութիւն էր վայելում ժողովրդի մէջ, հրամայեց առաքեալներին ատենից դուրս տանել, դարձաւ ժողովականներին և ասաց. «Անգգոյշ քայլ չանենք այդ մարդոց դէմ, աշխատենք անցեալի դասերից օգտուել: Օրինակի համար՝ փոքր առաջ Թեդաս անունով մէկը, նրանից յետոյ Յուդա Գալիլիացին մի քանի մարդկանց գլխից հանեցին, ապստամբեցին և պահանջում էին, թէ վայել չէ, որ Աստծու ժողովուրդը՝ Իսրայէլը բացի Եհովայից ուրիշ իշխող տէր ունենայ, բայց վերջը ցիր ու ցան եղան, Կորան, զնացին: Սրանց քարոզութեան վերաբերեալ իմ խորհուրդն այս է—այդ մարդոց վրայ ուշադրութիւն չդարձնել, թողէք ազատ քարոզեն: Եթէ դրանց գործը մարդկային է, ինքն իրան կքանդուէ, իսկ եթէ աստուածային է, ոչինչ չէք կարող անել, գուցէ և Աստծու դէմ կըռուողներ համարուէք»: Գամաղիէլի խօսքին թէև ամենք էլ հաւանութիւն տուին, բայց և այնպէս առաքեալներին կանչեցին, ծեծեցին, նորից պատուիրեցին, որ Յիսուսի անունով չքարոզեն և ապա արձակեցին: Առաքեալները ուրախ սրտով

հեռացան ատենիցը: Նրանք ցնծում էին, որ արժանի եղան Յիսուսի պատճառով անարգանք կրելու, չէին դադարում տաճարում և տներում քարոզելու Յիսուսի աւետարանը:

3. ԱՆԱՆԻԱ ԵՒ ՍԱՓԻՐԱ

ա. Համայնքի քաղմանալը

Գրիստոսի նոր հաւատացեալները մի սիրտ, մի հոգի դարձած՝ իրանց ունեցածը բերում առաքեալներին էին յանձնում, որպէսզի նրանք հաւատացեալների հոգևոր և մարմնաւոր պէտքերը հոգան: Նրանց մէջ ոչ ոք կարօտութիւն չուներ, որովհետև ով ազարակ կամ տուն ունէր, ծախում և փողը յանձնում էր առաքեալներին, որոնք հոգում էին աղքատների կարիքները: Յովսէփ անունով մէկը, որ վերջը Բառնաբաս կոչուեցաւ, մի ազարակ ունէր, ծախեց և նրա գինը ամբողջովին առաքեալներին տուաւ:

բ. Անանիայի մահը

Բայց մի ուրիշ մարդ՝ Անանիա անունով, այդպէս չարաւ—սա իւր Սափիրայ կնոջ հետ խօսքը մէկ արած՝ իրանց ազարակը ծախեցին, փողի մի մասը պահեցին, իսկ միւս մասը տարան և առաքեալներին յանձնեցին: Պետրոսն իմացաւ այս մարդու խաբեբայութիւնը, զնաց նրա մօտ

ВИАКОТЕА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕДЕННИ
Академии Наук
СССР

56990-66



և յանդիմանելով ասաց. «Անանիա, ինչո՞ւ դու սատանային լսեցիր, իսկ Սուրբ Հոգուն խաբեցիր և փողի մի մասը թագցրիր: Զէ՞ որ ագարակը քոնն էր, երբ ծախեցիր, նրա արժեքը դարձեալ քո իրաւունքի տակ էր, ի՞նչու դու այդպիսի բան արիր—իմացիր, որ դու սրանով ոչ թէ մարդ, այլ Աստծուն ես խաբել»: Անանիան այս խօսքը լսելուն պէս՝ վայր ընկաւ և հոգին աւանդեց: Ժողովում եղող երիտասարդները պատանեցին նրան և տարան թաղեցին:

գ. Սափիրայի մահը

Սափիրան ոչինչ չգիտէր, թէ իւր մարդուն ինչ է պատահել: Երեք ժամից ետոյ, երբ սա ևս ժողով եկաւ Պետրոսի մօտ: Առաքեալը հարցրեց նրան. «Ըշմարի՞տ է, Սափիրա, որ այնքանով ծախեցիք ագարակը»: Կինը պատասխանեց. «Այո, այնքանով»: Պետրոսը սրան ևս յանդիմանեց ու ասաց. «Դուք երկուսդ էլ խօսք էք կապել Սուրբ Հոգուն փորձելու, ահա այն անձինքը, որոնք քո մարդուն դրան առաջ թաղեցին, քեզ էլ այնտեղ կթաղեն»: Սափիրան վայր ընկաւ, յանկարծամահ եղաւ: Նրան էլ տարան և թաղեցին իւր մարդու մօտ: Համայնքը սարսափեց—ամեն լսող և իմացող երկիւղով էր յիշում այս դէպքը:

4. Ս. Ս Տ Ե Փ Ա Ն Ն Ո Ս Ն Ա Խ Ա Վ Կ Ա Յ
33 թ.

ա. Եօթն տարկաւագների ընտրութիւնը

Երբ հաւատացեալների թիւը բազմացաւ, առաքեալներն այլ ևս չէին կարողանում նրանց վրայ կանոնաւոր հոգս տանել, ուստի տրտունջներ եղան, թէ Պաղէստինում բնակւող հրէայ աղքատների վրայ աւելի ուշադրութիւն է դարձնւում՝ քան թէ օտար երկրներից եկող չեղէնախօս հրէայ աղքատների վրայ:

Այս պատճառով առաքեալները հաւատացեալներին ժողովի կանչեցին և ասացին. «Յարմար չէ, որ մենք քարոզութիւնը թողած՝ սեղանին ենք ծառայում: Ընտրեցէք ձեր միջից եօթը վկայուած մարդիկ, որոնք Սուրբ Հոգւոյ իմաստութիւնով լցուած լինեն: Նրանք աղքատների սեղանի հոգսը կտանեն, իսկ մենք կքարոզենք»: Այս առաջարկութիւնը ժողովականները հաւանեցին, ուստի և ընտրեցին եօթը վկայուած մարդիկ. 1. Ստեփանոս, որ Սուրբ Հոգւով լցուած մի անձ էր, 2. Փիլիպպոս, 3. Պրոքորոս, 4. Նիկանովրա, 5. Տիմոփեա, 6. Պարմենա և 7. Նիկողայոս: Համայնքը ընտրեալներին ներկայացրեց առաքեալներին, որոնք աղօթեցին նրանց համար, ձեռները գլխներին դնելով՝ հաստատեցին և իրաւունք տուին նորընտիրներին աղքատ-

ների սեղանի գործով զբաղուելու: Սրանից ետոյ առաքեալներն աւելի ժամանակ ունեցան քարոզելու և դրա համար էլ հաւատացեալների թիւը բազմանում էր Երուսաղէմում՝ մինչև անգամ քահանաներից շատերը, որ դեռ պատահած չէր, հաւատացին, թէ Քրիստոսը խոստացեալ Մեսսիան է եղել:

բ. Սուրբ Ստեփաննոսի վկայութիւնը

Այս եօթն ընտրուածներից, որ սարկաւազ կոչուեցան, գլխաւորը սուրբ Ստեփաննոսն էր՝ մի բարի և Սուրբ Հոգւոյ շնորքով լցուած մարդ: Սուրբ Ստեփաննոսը իւր շնորհալի քարոզներով պապանձեցնում էր հրէաներին, որոնք չկարողանալով պատասխանել նրա ասածներին, սկսեցին զրպարտել, որպէս թէ լսել են, թէ նա հայհոյանք էր խօսում տաճարի և Մովսիսի դէմ: Զրպարտողները Ստեփաննոսին ատեան տարան քահանայապետի առաջ, երկու սուտ վկայ գրտան, որոնք հաստատում էին. «Մենք լսեցինք, որ այս մարդը քարոզում էր, թէ Յիսուս Նազովրեցին տաճարը պիտի կործանէ և Մովսիսի օրէնքները փոխէ»:

Քահանայապետը հարցրեց. «Արդեօք այդ բաները ճիշտ են»: Սուրբ Ստեփաննոսը շնորհալի կերպով ցոյց տուաւ, որ իւր քարոզածները Յիսուս Քրիստոսի մասին ճշմարիտ են և հրէից

ազգի պակասութիւնները երեսներին տալով՝ աւաց. «Դուք, իսրայէլի խստապարանոց առաջնորդներ, չկամեցաք Յիսուս Քրիստոսի միջոցով Աստծու նշանակած քաղցր լուծը և թեթեւ բեռ տանել: Դուք միշտ Սուրբ Հոգուն հակառակում էք ձեր նախնիների նման: Ձեր հայրերը որ մարգարէին չհալածեցին և չսպանեցին: Նրանք առաջուց պատմեցին Արդարի մասին, իսկ դուք մատնեցիք և սպանեցիք նրան»:

գ. Ս. Ստեփաննոսի նահատակութիւնը

Հրէաները սաստիկ զայրացան այս խօսքերի վրայ և ատամները կրճատեցնում էին: Իսկ Ստեփաննոսը Սուրբ Հոգւով լցուած՝ նայեց դէպի երկինք և ասաց. «Ահա տեսնում եմ երկինքը բացուած և Մարդու Որին Աստծու աջ կողմում կանգնած»: Երբ այս խօսքերը լսեցին, բարձրաձայն աղաղակեցին, ականջները խցեցին և կատաղած յարձակուեցան Ստեփաննոսի վրայ, քաղաքից դուրս տարան ու սկսեցին քարկոծել: Այդ քարկոծմանը ներկայ էր Սաւուղ անունով մի երիտասարդ հրէայ, որ վերջը առաքեալ դարձաւ՝ Պօղոս անունով: Սա թշնամի էր հաւատացեալներին և Ստեփաննոսին նահատակողների վերաբերմունքն էր պահում, որպէսզի նրանք ազատ կերպով քարկոծեն: Քարկոծման ժամանակ Ստեփաննոսն աղօթում էր և ասում. «Տէր Յիսուս,

ան իմ հոգին, սրանց գործածը մեղք մի համա-
րիր»։ Այս ասաց և հոգին աւանդեց։



5. Ե Թ Ո Վ Պ Ա Յ Ի Ն Ե Ր Ք Ի Ն Ի Ն

34 թ.

ա. Հալածանք եկեղեցու դէմ՝ եւ աւետարանի
տարածուիլը Հրէաստանում եւ Սամարիայում

Ս. Ստեփաննոսի նահատակութիւնից ետոյ՝
կատաղած ամբօխը Երուսաղէմ դարձաւ, ուր մեծ
հալածանք բարձրացաւ հաւատացեալների դէմ։
Բացի առաքեալներից բոլոր հաւատացեալները
երկիւղից փախան Հրէաստանի և Սամարայի քա-
ղաքները և գիւղերը։ Ամբօխի զայրոյթն այն աս-
տիճան էր, որ հաւատացեալները չվստահացան

Ստեփաննոսի մարմինը թաղել, այլ այդ պարտ-
քը կատարեցին Երուսաղէմում բնակւող բարե-
պաշտ հրէաները։

Հալածողների մէջ ամենից աւելի աչքի էր ընկ-
նում Սաւուղը—նա մտնում էր հաւատացեալ-
ների տները, մարդկանց և կանանց բռնում էր
և բանտարկում։ Փախած հաւատացեալները, ուր
գնում էին, ամեն տեղ քարոզում էին աւետա-
րանը։

Աղքատների սեղանին ծառայող Փիլիպպոս
սարկաւազը եկաւ Սամարիայի քաղաքներից մի-
նը և այնտեղ քարոզում էր Քրիստոսի աւետա-
րանը։ Ժողովուրդը սիրով էր լսում սրա քարոզ-
ները և աչքով տեսնում էր Յիսուս Քրիստոսի
անունով ցոյց տուած հրաշքները—շատ անդա-
մալոյծներ և կաղեր բժշկւում էին։

Երբ առաքեալները Երուսաղէմում լսեցին, թէ
Սամարիայում ևս քարոզւում է աւետարանը,
Պետրոսին և Յովհաննէսին ուղարկեցին այնտեղ։
Սրանք եկան, ձեռք դրին հաւատացեալների գլը-
խին, որպէսզի Սուրբ Հոգին ընդունեն։

Մի մարդ՝ Սիմօն անունով, որ կախարդու-
թիւնով էր պարապում, երբ տեսաւ, որ առա-
քեալները ձեռք գլխին դնելով՝ հաւատացեալնե-
րը ընդունում են Սուրբ Հոգին, եկաւ առաքեալ-
ների մօտ, փող խոստացաւ նրանց և ասաց.
«Ինձ ևս իշխանութիւն տուէք՝ ում վրայ ձեռք

դնեմ, Սուրբ Հոգին ընդունէ»։ Բայց Պետրոսը նրան պատասխանեց և ասաց. «Աստծու շնորհը փողով չեն ստանում, քո վարմունքը տգեղ է, զղջա և աղօթիր, որ պատժի չարժանանաս»։ Առաքեալները Սամարացւոց շատ գիւղերում աւետարանը քարոզելուց ետոյ՝ դարձան Երուսաղէմ։

բ. Ներքինու դարձը

Սրանից ետոյ Աստծու հրեշտակը երևաց Փիլիպպոսին և պատուիրեց, որ գնայ Երուսաղէմ — Գաղա քաղաքների ճանապարհի վրայ։ Փիլիպպոսը, երբ այնտեղ հասաւ, տեսաւ, որ մի ներքինի կառքով գնում էր։ Այս ներքինին եթովպացւոց թանգուհու գանձապետն էր, Երուսաղէմ ուխտ էր գնացել՝ տուն էր վերադառնում։ Փիլիպպոսը Սուրբ Հոգւոյ ազդմամբ մօտեցաւ սրբան և տեսաւ, որ Եսայիա մարգարէի գիրքն է կարդում։ Փիլիպպոսը հարցրեց. «Արդե՞ք կարդացածդ հասկանում ես»։ Նա պատասխանեց և ասաց. «Ի՜նչպէս կարող եմ հասկանալ մէնչև որ մէկն ինձ չմեկնէ» և Փիլիպպոսին աղաչեց, որ կառքը բարձրանայ և նստէ իւր մօտ։ Ներքինու կարդացածը Եսայի մանգարէի այն խօսքերն էին, որ Քրիստոսի մասին ասում է. «Ոչխարի պէս մորթելու տարան, գառան նման բուրդը խուզողի առաջ բերանը բաց չարաւ, ձայն չհանեց»։ Ներքինին Փիլիպպոսին հարցրեց. «Մարգարէն

այս խօսքերը ո՞ւմ համար է ասել, ի՞նչ թէ ուրիշի մասին»։ Փիլիպպոսն այն ժամանակ բացատրեց նրան և քարոզեց Քրիստոսի աւետարանը։ Ծանապարհը շարունակում էին։



գ. Ներքինու մկրտուիլը

Երբ հասան մերձակայ գետակի ափին, ներքինին ասաց. «Ահա ջուր, ի՜նչն է արգելում ինձ, որ ես մկրտուեմ»։ Փիլիպպոսն ասաց. «Եթէ ամբողջ սրտովդ հաւատում ես, կարելի է»։ Ներքինին պատասխանեց և ասաց. «Հաւատում-

եմ, որ Յիսուս Քրիստոսը Աստծու որդին է»։
Հրամայեց որ կռքը կանգնէ, երկուսն էլ ի-
ջան գետակի ափը և Փիլիպպոսը մկրտեց ներ-
քինուն։ Երբ ջրից դուրս եկաւ, Աստծու հոգին
յափշտակեց Փիլիպպոսին և այլ ևս չտեսաւ նը-
րան։ Ներքինին ուրախ-ուրախ շարունակում էր
ձանապարհը։ Այնտեղից Փիլիպպոսը գնաց Ազով-
տոս քաղաքը, շրջում էր Սամարիայի քաղաք-
ներում և քարոզում աւետարանը։ Վերջն եկաւ
Կեսարիա քաղաքը։

6. ՍԱԼՈՒՂԻ ԴԱՐՈՂ ԴԱՄԱՍԿՈՍԻ

35 թ.

ա. Սաւուղի դարձը Դամասկոսի մօտ։

Սուրբ Ստեփաննոսի նահատակութեան ժամա-
նակ Սաւուղը ներկայ էր։ Սա որքան պաշտպան
էր Մովսիսական օրէնքին, նոյնքան ատում էր
Քրիստոսի հաւատացեալներին և հետամուտ էր
նրանց հալածելու։ Սաւուղն իշխանութեան սպա-
սաւորներին հետ մտնում էր տները և որտեղ հա-
ւատացեալ էր գտնում, բանտարկել էր տալիս։
Նա սրանով չբաւականացաւ, այլ երբ իմացաւ
հաւատացեալների Դամասկոս փախչելը, գնաց
քահանայապետի մօտ, հրաման ստացաւ գնալ
այնտեղ և հաւատացեալներին կապած Երուսա-
ղէմ բերել։

Երբ Դամասկոսին մօտեցաւ, երկնքից յան-
կարծ լոյս փայլատակեց։ Սաւուղը գետնի վրայ
ընկաւ, երկնքից ձայն եկաւ, որ ասում էր. «Սա-
ւուղ, Սաւուղ, ինչո՞ւ ես ինձ հալածում»։ Սաւու-
ղը հարցրեց. «Տէր, ո՞վ ես դու»։ Ձայնը պա-
տասխանեց. «Ես այն Յիսուսն եմ, որին դու



լո՞ւղ, Սաւուղ, ինչո՞ւ ես ինձ հալածում»։ Սաւու-
ղը հարցրեց. «Տէր, ո՞վ ես դու»։ Ձայնը պա-
տասխանեց. «Ես այն Յիսուսն եմ, որին դու

հալածում ես: Խթանին հակառակ չի կարելի ա-
քացել—դրանով ինքդ քեզ կփնասես»: Սաւուղը
դողալով հարցրեց. «Տէր, ի՞նչ կկամենաս, որ ա-
նեմ»: Ձայնը պատասխանեց. «Վեր կաց և գնա
քաղաք, այնտեղ քեզ կասեն, թէ ի՞նչ պիտի ա-
նես»: Սաւուղի հետ եղող մարդիկը ապշած,
կանգնած էին, ձայնը լսում էին, բայց չէին տես-
նում, թէ ով է խօսողը: Սաւուղը տեղից վեր
կացաւ, նրա աչքերը կուրացել էին, ուստի ու-
ղեկիցները ձեռիցը բռնած՝ Դամասկոս տարան:
Սաւուղը յուզուած էր—երեք օր ոչ ուտում և
ոչ խմում էր:

բ. Անանէն մկրտում է Սաւուղին:

Դամասկոսում կենում էր Յիսուսի աշակերտ-
ներից մինը, որի անունն էր Անանիա: Աստուած
տեսիլքում ասաց նրան. «Անանիա, վեր կաց և
գնա այն փողոցը, որ Ուղիղ է կոչւում, այնտեղ
Յուդայի տանը տարսոնացի Սաւուղին հարցրու՝
նա դեռ ևս աղօթում է»: Անանիան սկզբում վա-
խեց, չուզեց գնալ.—նա ասաց. «Այն մարդու
համար ես շատերից լսել եմ, թէ Երուսաղէմում
ի՞նչպէս է հալածել հաւատացեալներին: Նա քա-
հանայապետից իրաւունք է ստացել, որ Դամաս-
կոս գնայ քեզ հաւատացողներին կալանաւորէ
և Երուսաղէմ ուղարկէ»: Աստուած ասաց նրան.
«Գնա, մի վախենար, ես այն մարդուն ընտրել

եմ, որ իմ անունը ամբողջ աշխարհի մէջ քա-
րոզէ—նա ինձ համար շատ չարչարանքներ պի-
տի կրէ»: Անանիան գնաց և գտաւ Սաւուղի բը-
նակարանը, ձեռը դրաւ նրա գլխին և ասաց.
«Սաւուղ եղբայր, վերև նայիր, այն Տէր Յիսու-
սը, որ ճանապարհին քեզ երևաց, ուղարկեց ինձ՝
քո աչքերը բժշկելու, որպէսզի դու Հոգւով Սրբ-
բով լցուես»: Այս խօսքերից ետոյ Սաւուղի աչ-



քերից կեղևի պէս մի բան վայր ընկաւ, որից
ետոյ իսկոյն տեսաւ: Սրանից ետոյ Սաւուղը
մկրտուեցաւ:


Մկրտութիւնից ետոյ Սաւուղը մի քանի օր
մնաց Յիսուսի աշակերտների մօտ և սկսաւ քա-
րոզել Քրիստոսի մասին, թէ նա է ճշմարիտ
Մեսսիան: Լսողները զարմանում էին և ասում.
«Սա նա չէ, որ Երուսաղէմում հալածում էր

Քրիստոսի խոստովանողներին և հէնց դրա համար էլ հրաման ստացաւ քահանայապետից, որ հաւատացեալներին կապէ և Երուսաղէմ ուղարկէ»։ Սաւուղն աւելի և աւելի էր զօրանում այն հաւատով, թէ Քրիստոսն է խոստացեալ Մեսսիան և նոյնը քարոզում էր Դամասկոսի հրէաներին։ Այս բանի համար հրէաները սաստիկ կատաղեցան Սաւուղի դէմ, գիշեր ցերեկ դռների մօտ պահապաններ էին նշանակել ե ուզում էին բռնել նրան։ Այս բանն իմացան աշակերտները, գիշերը զամբիւղով քաղաքի պարսպից կախ աւրին և Դամասկոսից Երուսաղէմ փախցրին։

Գ. Սաւուղը քարոզում է Դամասկոսում՝ եւ Երուսաղէմում։

Սաւուղը Երուսաղէմ դարձաւ. ցանկացաւ մըտնել այնտեղի հաւատացեալների մէջ, բայց սրբանք առաջին անգամ չհաւատացին՝ մինչև որ Բառնաբասը առաքեալների մօտ բերաւ և ամեն ինչ մանրամասնօրէն պատմեց — թէ ինչպէս Յիսուս Սաւուղին երևացել է և Դամասկոսումը համարձակ կերպով քարոզել Քրիստոսի մասին։ Սաւուղը Երուսաղէմում ևս սկսեց քարոզել հրէաներին Յիսուսի մասին։ Այստեղ ևս նոյնը պատահեց, ինչ որ Դամասկոսում — հրէաները մտադրուեցան սպանել Սաւուղին, բայց երբ հաւատացեալներն այս բանն իմացան, կեսա-

րիայի վրայով հայրենի Տարսոն քաղաքը փախցրին։



Տարսոն քաղաք

Դ. ԿՈՌՆԵԼԻՈՍ ՀԱՐԻԻՐԱՊԵՏԻ ԴԱՐՁԸ

ա. Այց Կորնեղիոսին

Սաւուղի դարձով եկեղեցին հանգստութիւն էր վայելում Հրէաստանում, Սամարիայում և Գալիլիայում, ուստի Պետրոս առաքեալը այցելութեան գնաց համայնքներին, քարոզեց, մխիթարեց և ամրապնդեց հաւատի մէջ։ Վերջը եկաւ Յուպէ քաղաքը։

Պաղեստինացւոց կեսարիայում Իտալացի կո-

չուած գնդից մի հարիւրապետ կար՝ անունը Կոռնելիոս: Սա թէև հեթանոս էր, բայց հրէաներից շատ լաւ բաներ էր սովորել—բարեպաշտ և աստուածավախ մարդ էր, ամեն ժամանակ ողորմութիւն էր տալիս աղքատներին, նրա աղօթքն առ Աստուած անպակաս էր: Մի անգամ աղօթքի իններորդ ժամին Աստծու հրեշտակը երևեցաւ նրան և ասաց. «Կոռնելիոս»: Սա զարհուրեց և ասաց. «Ի՞նչ է, Տէր»: Տէրն ասաց. «Քո աղօթքը և տուած ողորմութիւնը Աստծուն ընդունելի եղան, մարդ ուղարկիր Յոպպէ քաղաքը և կանչել տուր Պետրոս կոչուած Սիմօնին: Նա հիւր է կաշէգործ Սիմօնի մօտ. նրա տունը ծովից հեռի չէ. նա կգայ և կսովորցնէ քեզ, թէ ինչ պիտի անես, որ փրկուես»: Երբ հրեշտակը հեռացաւ նրանից, Կոռնելիոսը կանչեց իւր ծառաներից երեք հոգու, պատմեց նրանց այս ամենը և Յոպպէ ուղարկեց Պետրոսի ետևից:

Բ Պետրոսի տեսիլքը

Սպասաւորները, երբ քաղաքին մօտեցան, հէնց այդ ժամանակ Պետրոսը տանիքն էր բարձրացել աղօթելու: Ծաշի ժամանակ էր: Առաքելը, սովեց և կամենում էր ուտել: Յանկարծ տեսաւ, որ երկինքը բացուեցաւ և տյնտեղից՝ չորս ծայրից բռնած մի կապոց իւր առաջն իջաւ: Այս կապոցի մէջ կային ամեն տեսակ չորքոտանի կենդանի-

ներ, սողուն և թռչուններ: Պետրոսն այս բանի վրայ զարմացած էր: Երկնքից ձայն եկաւ, որ ասում էր. «Վեր կաց, Պետրոս, մորթիր և կեր»: Պետրոսն ասաց. «Քաւ լիցի, տէր, ես միշտ և այսօր պիղծ բան չեմ կերել»: Երկրորդ անգամ



ձայն եկաւ երկնքից, որ ասում էր. «Ինչ որ Աստուած սուրբ է համարում, դու պիղծ մի ընդունի»: Այս խօսքերը երեք անգամ կրկնուելուց ետոյ՝ անօթը երկինք բարձրացաւ: Պետրոսը զարմացած մտածում էր, թէ ի՞նչ է նշանակում այս տեսիլքը: Ահա հէնց այդ ըրպէին Կոռնե-

լիոսի սւղարկած մարդիկը կաշէգործ Սիմօնի դրանը կանգնեցին և հարցնում էին. «Սիմօն կոչուած Պետրոսն անյատեղ է»: Պետրոսը դեռ ևս մտածում էր այս տեսիլքի նշանակութեան մասին, որ Սուրբ Հոգին ասաց նրան. «Ահա երեք մարդ քեզ որոնում են, նրանց ես եմ ուղարկել, ոչնչի վրայ մի կասկածիր, վեր կաց և գնա»: Պետրոսը տանիքից վայր իջաւ և Կոռնելիոսից ուղարկած մարդկանց հետ գնացին Կեսարիա:

գ. Պետրոսի քարոզութիւնը

Կոռնելիոսը կանչել էր իւր ազգականներին և բարեկամներին ու սպասում էր Պետրոսին: Երբ առաքեալը տուն մտաւ, Կոռնելիոսն առաջ գընաց, ոտներն ընկաւ և երկրպագութիւն էր տալիս: Պետրոսը ձեռից բռնեց, կանգնեցրեց և ասաց. «Վեր կաց, ես ևս քեզ նման մի մարդ եմ»: Երբ հիւրերին տեսաւ Պետրոսն ասաց Կոռնելիոսին. «Դու ևս գիտես, որ հրէաների օրէնքին հակառակ է հեթանոսների հետ յարաբերութիւն ունենալը, բայց Աստուած ինձ տեսիլքով յայտնեց, որ այսուհետև այդպիսի խտրութիւն չպիտի լինի, դրա համար էլ եկայ քեզ մօտ: Այժմ ասա, ինչո՞ւ ես կանչել ինձ»: Կոռնելիոսը պատմեց. «Զորս օր սրանից առաջ՝ իններորդ ժամին աղօթք էի անում: Մի մարդ սպիտակ հանդերձ հա-

գած՝ կանգնեց առաջս ու ասաց— Կոռնելիոս, քո աղօթքը լսելի եղաւ, քո տուած ողորմութիւնները յիշուեցան Աստծու առաջ, մարդ ուղարկիր



Յոպպէ և կանչել տնւր Սիմօն Պետրոսին, նա կգայ և քեզ կասէ, թէ ինչ պիտի անես: Ես իսկոյն քեզ մօտ մարդ ուղարկեցի և դու լաւ ես արել,

որ եկել ես: Ահա մենք ամենքս քո առաջը ժողոված ենք՝ քեզնից Աստծու պատուէրները լրսելու»: Պետրոսն սկսաւ քարոզել և ասել. «Աստուած մարդոց անձնաւորութեանը չէ նայում, ով արդարութիւն է գործում, նրան սիրում է: Դուք գիտէք, որ Աստուած խաղաղութիւնը Յիսուս Քրիստոսի ձեռով քարոզեց: Դուք գիտէք, թէ ինչ պատահեց Հրէաստանում՝ Գալիլիայից սկսած, թէ ինչպէս Աստուած Նազարէթցի Յիսուսին օծեց Հոգւով Սրբով, որը շրջեց երկրի մէջ՝ ամենին բարիք անելով և հիւանդներին բժշկելով: Մենք վկայ ենք այն ամենին, ինչ որ Հրէաստանում և Երուսաղէմում գործեց: Հրէաները թէև փայտից կախեցին և այնպէս սպանեցին, բայց Աստուած նրան յարութիւն տուաւ երբորդ օրը և յայտնեց թէ ժողովրդին և թէ մեզ: Նա պատուիրեց մեզ ամենին քարոզելու և վկայելու, որ նա Աստծուց նշանակուած կենդանիների և մեռելների դատաւորն է: Բացի դրանից բոլոր մարգարէները ևս վկայում են, որ նրան հաւատացողը մեղքերին թողութիւն կըստանայ»:

դ. Կոռնելիոսի մկրտութիւնը

Պետրոսը դեռ ևս չէր վերջացրել իւր խօսքը, որ Սուրբ Հոգին իջաւ այնտեղի բոլոր ունկընդիրներին վրայ: Պետրոսի հետ եկող վեց հաւա-

տացեալները զարմացան, որ հեթանոսներին ևս Սուրբ Հոգւոյ պարգևը շնորհոււմ էր: Իրանց աչքով տեսնում էին, թէ ինչպէս Կոռնելիոսը և նրա մօտ ժողովուած հեթանոսները զոհանում և և փառաբանում էին Աստծուն: Այն ժամանակ Պետրոսն ասաց. «Ո՛վ կարող է ջուրն արգելել, որ սրանք չմկրտուեն, որոնք Սուրբ Հոգին ընդունեցին, ինչպէս և մենք»: Ետոյ նրանց բոլորին էլ մկրտեցին: Պետրոսը մի քանի օր ֆնաց նրանց մօտ և ետոյ դարձաւ Երուսաղէմ ու պատմեց միւս առաքեալներին: Ամենքը փառք տուին Աստծուն, որ հեթանոսները ևս կարող են մտնել նրա արքայութիւնը:

8. ՅԱԿՈՎԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՄԱՐՏԻՐՈՍԱԿԱՆ ՄԱՀԸ ԵՒ ՊԵՏՐՈՍԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

ա. Յակովբոսի մահը եւ Պետրոսին վտանգ է սպառնում

Այդ օրերում Հերովդէս Ագրիպպա թագաւորը հալածանք սկսեց եկեղեցւոյ անդամների ոմանց դէմ—նա սրով սպանել տուաւ Յովհաննիսի եղբայր Յակովբոսին: Երբ նա տեսաւ, որ այս վարմունքը հաճելի է հրէաներին, սկսաւ Պետրոսին ևս հալածել: Զատկի տօնը մօտեցել էր: Պետրոսին բանտարկել տուաւ խիստ հսկողութեան ներքոյ—մտադիր էր Զատկի տօնին

ժողովրդին ներկայացնել: Համայնքն աղօթում էր Պետրոսի ազատութեան համար: Երբ Հերովդէսը կամենում էր Պետրոսին ժողովրդին ներկայացնել, այդ գիշեր առաքեալը քնած էր երկու հսկող պահապանների մէջ տեղը՝ կրկին շըղթայով կապած: Միւս պահապանները դռներն էին հսկում:

բ. Պետրոսի ազատութիւնը

Աստուծոյ հրեշտակը եկաւ նրա մօտ, զարթեցրեց և ասաց. «Վեր կաց, շտապիր, գօտիկդ կա-



պիր, հողաթափներդ հագիր, վերարկուդ ան և հետևիր ինձ»: Պետրոսը կատարեց հրեշտակի

պատուէրը: Նա չգիտէր իւր հետ կատարուածն իրողութիւն էր, թէ մի երազ: Նրանք անցան առաջին և երկրորդ դռան մօտով և հասան երկաթէ դռան, որ ինքն իրան բացուեց և նրանք անցան փողոցը: Այստեղ հրեշտակը բաժանուեց նրանցից: Պետրոսն սթափուեց և ասաց ինքն իրան. «Այժմ հասկանում եմ, որ Աստուծոյ է ինձ ազատել իւր հրեշտակի ձեռով:

գ. Պետրոսի հրաժարականը

Երբ Պետրոսն սթափուեց, եկաւ Յովհաննէս Մարկոսի մայր Մարիամի տունը, ուր շատերը հաւաքուած աղօթում էին: Պետրոսը բաղխեց դուռը: Մի աղախին, որի անունն էր Հռովդէ, դուրս եկաւ իմանալու, թէ ով է: Սա Պետրոսի ձայնից ճանաչեց, բայց ուրախութիւնից դուռը բաց չարաւ, այլ վազեց աւետիք տալու: Ներս եղողները չհաւատացին և ասացին աղախինին. «Խելքդ կորցրել ես, երևի նրա հրեշտակն է»: Պետրոսը շարունակում էր դուռը բաղխել: Երբ դուռը բաց արին, տեսան Պետրոսին իրան և խիստ զարմացան: Պետրոսը ձեռով նշան արաւ, որ լսեն իրան և պատմեց թէ ինչպէս Աստուծոյ հրեշտակի ձեռով ազատել է իրան: Վերջը պատուիրեց յայտնել այս բանը Յակովբոսին և միւս եղբայրներին»:

դ. Հերովդէսի մահը

Երբ լուսը բացուեց, պահապանները շփոթուեցին, որ Պետրոսը չկայ: Հերովդէսը պահանջում էր բանտարկեալին: Երբ չկարողացաւ նրան գտնել, հրամայեց պահապաններին սպանել, իսկ ինքը գնաց Կեսարիա: Այստեղ Հերովդէսը դատաւորական աթոռի վրայ նստաւ և խօսում էր ժողովրդի հետ, իսկ ժողովուրդը աղաղակում էր ու ասում. «Սա Աստծու ձայնն է և ոչ մարդու»: Աստծու հրեշտակը տեղն ու տեղը սպանեց Հերովդէսին, որովհետև սա չէր փառք տալիս նրան—որդնալից եղաւ և հոգին աւանդեց: Աստծու խօսքը աճում և զօրանում էր:



II.

ԱԻԵՏԱՐԱՆԻ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ ՀԵԹԱ- ՆՈՍՆԵՐԻ ՄԷՁ

9. ՍԱԽՈՒՂԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՈՒՂԵ-
ԻՈՐՈՒԹԻՒՆԸ

45 թ.



ա. Անտիոքի համայնքը

տեփաննոսի հալածանքի ժամանակ հաւատացեալները երկիւղից այս և այն կողմ ցրուեցին: Ոմանք էլ Ասորիքի Անտիոք քաղաքն եկան և այստեղ հետզհետէ հաւատացեալների մի նոր խումբ կազմեցին: Բառնաբասը ևս այստեղ եկաւ, որտեղից Տարսոն գնաց և Սաւուղին հետն առած՝ վերադարձաւ Անտիոք: Զրիստոնեսայ անունն առաջին անգամ այստեղ

տրուեց հաւատացեալներին: Սաւուղը և Բառնաբասը մի տարի մնացին Անտիոքում և շատերին քրիստոնեայ դարձրին: Անտիոքի հաւատացեալները մէջ կային նշանաւոր մարդիկ — Բառնաբասը, Սաւուղը և ուրիշ շատերը: Մի օր, երբ աշակերտները միասին աղօթում էին, Սուրբ Հոգին յայտնեց և ասաց. «Բառնաբասին և Սաւուղին ուղարկեցէք հեթանոսներին քարոզելու»: Անտիոքի քրիստոնեայ համայնքը այդպէս էլ կարգադրեց:

բ. Սաւուղը եւ Բառնաբասը Կիպրոսում

Սաւուղն ու Բառնաբասը Անտիոքից եկան Սելևկիա քաղաքը, իսկ այնտեղից էլ նաւեցին Կիպրոս և եկան կղզու գլխաւոր քաղաքը՝ Սաղամիւնա: Այստեղ հրէից ժողովրդանոցումը քարոզեցին խաչեալ Յիսուսի մասին: Սրանց հետն էր իբրեւ թարգման և Հռովմայեցւոց լեզուին քաջ տեղեակ Մարկոս մականունեալ Յովհաննէսը: Շրջեցին ամբողջ կղզին և եկան Պափոս կոչուած քաղաքը, ուր կենում էր մի կախարդ՝ սոստ մարգարէ Բարեյեսու անունով: Սա հետամուտ էր բղջիխի փոխանորդ Սերգի Պաւղոսին հաւատափոխ անելու, որին Սաւուղը քրիստոնեայ էր դարձրել: Սաւուղը սրա անունովն էլ փոխում է իւր անունը և այնուհետեւ փոխանակ Սաւուղի՝ կոչւում է Պաւղոս կամ Պօղոս: Պօղոս ա-

ռաքեալն այս բանի համար յանդիմանեց կախարդին և ասաց. «Դու խաբեբայ և սատանայի որդի, ի՞նչու շարունակ աշխատում ես Աստծու ուղիղ ճանապարհը ծռելու, դու յանցանք ես գործում, ուստի և կպատժուես—դու կոյր կլինես»: Այդպէս էլ եղաւ: Նա այլ ևս չէր տեսնում—ձեռից բռնած ման էին ածում: Սերգի իշխանն այս հրաշքը որ տեսաւ, աւելի ևս հաստատուեց իւր հաւատի մէջ:

գ. Ուղեւորութիւն Փոքր-Ասիայում՝ մինչեւ Լիւստրա

Պօղոսը իւր խմբով Պափոսից նաւեց և եկաւ Պամփիլիայի Պերգէ քաղաքը: Այստեղ Յովհաննէսը բաժանուեց նրանցից և դարձաւ Երուսաղէմ, իսկ նրանք Պերգէից եկան Պիսիդիայի Անտիոք քաղաքը: Պօղոսը հրէից սինագոգը գնաց քարոզելու:

Ունկնդիրները հաւանեցին Պօղոսի քարոզը և երբ ժողովարանից դուրս եկան՝ խնդրում էին, որ միւս շաբաթ էլ քարոզէ իրանց:

Հետեւեալ շաբաթ համարեա թէ ամբողջ քաղաքը հաւաքուեցաւ Աստծու խօսքը լսելու: Հրէաները, երբ այս բազմութիւնը տեսան, նախանձով լցուեցան, սկսեցին Պօղոսին հակաճառել և հայհոյել: Այն ժամանակ Պօղոսը և Բառնաբասը առանց երկիւղի պատասխանեցին. «Աստծու խօսքն

տրուեց հաւատացեալներին: Սաւուղը և Բառնաբասը մի տարի մնացին Անտիոքում և շատերին քրիստոնեայ դարձրին: Անտիոքի հաւատացեալները մէջ կային նշանաւոր մարդիկ — Բառնաբասը, Սաւուղը և ուրիշ շատերը: Մի օր, երբ աշակերտները միասին աղօթում էին, Սուրբ Հոգին յայտնեց և ասաց. «Բառնաբասին և Սաւուղին ուղարկեցէք հեթանոսներին քարոզելու»: Անտիոքի քրիստոնեայ համայնքը այդպէս էլ կարգադրեց:

բ. Սաւուղը եւ Բառնաբասը Կիպրոսում

Սաւուղն ու Բառնաբասը Անտիոքից եկան Սեւլեկիա քաղաքը, իսկ այնտեղից էլ նաւեցին Կիպրոս և եկան կղզու գլխաւոր քաղաքը՝ Սաղամիս: Այստեղ հրէից ժողովրդանոցումը քարոզեցին խաչեալ Յիսուսի մասին: Սրանց հետն էր իբրեւ թարգման և Հռովմայեցւոց լեզուին քաջ տեղեակ Մարկոս մականունեալ Յովհաննէսը: Շրջեցին ամբողջ կղզին և եկան Պափոս կոչուած քաղաքը, ուր կենում էր մի կախարդ՝ սուտ մարգարէ Բարեյեսուս անունով: Սա հետամուտ էր բզեշխի փոխանորդ Սերգի Պաւղոսին հաւատափոխ անելու, որին Սաւուղը քրիստոնեայ էր դարձրել: Սաւուղը սրա անունովն էլ փոխում է իւր անունը և այնուհետեւ փոխանակ Սաւուղի՝ կոչւում է Պաւղոս կամ Պողոս: Պողոս ա-

ռաքեալն այս բանի համար յանդիմանեց կախարդին և ասաց. «Դու խաբեբայ և սատանայի որդի, ինչու շարունակ աշխատում ես Աստծու ուղիղ ձանապարհը ծռելու, դու յանցանք ես գործում, ուստի և կպատժուես—դու կոյր կլինես»: Այդպէս էլ եղաւ: Նա այլ ևս չէր տեսնում—ձեռից բռնած ման էին ածում: Սերգի իշխանն այս հրաշքը որ տեսաւ, աւելի ևս հաստատուեց իւր հաւատի մէջ:

գ. Ուղեւորութիւն Փոքր-Ասիայում՝ մինչեւ Լիւստրա

Պողոսը իւր խմբով Պափոսից նաւեց և եկաւ Պամփիլիայի Պերգէ քաղաքը: Այստեղ Յովհաննէսը բաժանուեց նրանցից և դարձաւ Երուսաղէմ, իսկ նրանք Պերգէից եկան Պիսիդիայի Անտիոք քաղաքը: Պողոսը հրէից սինագոգը գնաց քարոզելու:

Ունկնդիրները հաւանեցին Պողոսի քարոզը և երբ ժողովարանից դուրս եկան՝ խնդրում էին, որ միւս շաբաթ էլ քարոզէ իրանց:

Հետեւեալ շաբաթ համարեա թէ ամբողջ քաղաքը հաւաքուեցաւ Աստծու խօսքը լսելու: Հրէաները, երբ այս բազմութիւնը տեսան, նախանձով լցուեցան, սկսեցին Պողոսին հակաճառել և հայհոյել: Այն ժամանակ Պողոսը և Բառնաբասը առանց երկիւղի պատասխանեցին. «Աստծու խօսքն

առաջ ձեզ՝ հրէաներիդ պիտի քարոզուէր, բայց որովհետեւ դուք չընդունեցիք, այս պատճառով էլ հեթանոսներին ենք քարոզում»։ Հեթանոսներն այս բանը լսելով՝ ուրախացան և շատերը հաւատացեալ դարձան։ Բայց հրէաները զրգռեցին ամբոխին, հալածանք յարուցին Պօղոսի և Բառնաբասի դէմ և իրանց սահմաններից արտաքսեցին։

Պօղոսը և Բառնաբասը Անտիոքից գնացին Իկոնիա քաղաքը և այնտեղի ժողովարանում ըսկսեցին քարոզել։ Քարոզութեան հետեանքն այն եղաւ, որ բազմաթիւ հրէաներ և յոյներ հաւատացեալ դարձան։ Չհաւատացող հրէաները այստեղ ևս զրգռեցին հեթանոսներին առաքեալների դէմ։ Կազմուեցաւ կուսակցութիւն—ոմանք առաքեալների կողմն էին, իսկ ոմանք՝ հրէաների։ Բանն այն տեղ հասաւ, որ չհաւատացող հրէաները և հեթանոսներն իրանց իշխանների հետ միասին յարձակուեցան Քրիստոսի աշակերտների վրայ և կամենում էին քարկոծել։ Իսկ սրանք իմանալով այս բանը՝ փախան Լիւստրա և Դերբէ քաղաքները և այնտեղ էին քարոզում։

Դ. Կառի ըստ լուծիւնը Լիւստրայում

Լիւստրայում ի ծնէ մի կաղ կար, որը սիրով էր լսում Պօղոսի քարոզութիւնները։ Առաքեալը, երբ նկատեց, որ նրա մէջ հաւատ կայ, այն

կռապաշտ ժողովրդի առաջ բարձր ձայնով ասաց. «Քեզ եմ ասում, Յիսուս Քրիստոսի անունով վեր կաց և ման արի»։ Կաղը բժըկուեց, վեր կացաւ և վազում էր։ Կռապաշտ ժողովուրդն այս հրաշքը որ տեսաւ, այնպէս կարծեց, թէ Պօղոսը և Բառնաբասը իրանց կուռ-



քերն են, ուստի զարմանալով բացականչեցին. «Աստուածները մարդու կերպարանք առած՝ երկնքից մեղ մօտ են իջել։ Բառնաբասին Դիոսի տեղ էին դնում, իսկ Պօղոսին Հերմէս էին անուանում։ Դիոսի քուրմը վազեց, որ պսակներ

և ցուլեր բերէ առաքեալների առաջը զոհելու: Երբ այս բանն իմացան Պօղոսը և Բառնաբասը, հանդերձները պատառեցին և ասում էին. «Մարդիկ, այդ ի՞նչ էք անում, մենք ևս ձեզ նման մահկանացուներ ենք, մենք եկել ենք ձեզ քարոզելու, որ սուտ աստուածներից հեռանաք և դառնաք դէպի կենդանի Աստուածը, որ ստեղծեց երկինքն ու երկիրը»: Այս ասելով՝ հազիւ դադարեցրին ժողովրդին զոհ մատուցանելուց:

Անտիոքի և Իկոնիայի հրէաները, երբ իմացան, թէ առաքեալները շատերին քրիստոնեայ են դարձրել, վեր կացան, եկան և ժողովրդին գրգռեցին, որ հեռացնեն քաղաքից: Պօղոսին քարկոծեցին, կարծում էին թէ սա արդէն մեռաւ: Հաւատացեալները շրջապատեցին նրան և հետևեալ օրը Բառնաբասի հետ փախցրին Դերբէ քաղաքը:

Այս քաղաքում շատերին աւետարանելուց ետոյ՝ դարձան Լիւստրա, Իկոնիա և Անտիոք, յորդորեցին հաւատացեալներին չթուլանալ իրանց հաւատի մէջ՝ յայտնելով նրանց, որ շատ նեղութիւններ կրելով՝ պէտք է մտնել Աստծու արքայութիւնը: Ամեն մի քրիստոնէական համայնքի համար երեցնէր՝ առաջնորդներ ձեռնադրեցին, աղօթք արին, ծոմ պահեցին և յանձնեցին նրանց այն Աստծուն, որին իրանք հաւատում էին:

Ե. Դարձ դէպի Անտիոք

Սրանից ետոյ շրջեցին Պիսիդիայի միջով և ապա եկան Պամփիլիայի Պերգէ քաղաքը, ուր քարոզելով՝ դարձան Ատտալիա: Այստեղից նաւ նստեցին, եկան Անտիոք, որտեղից հեռացել էին՝ կատարելու այն առաքելութիւնը, որ յանձնուած էր նրանց: Երբ տեղ հասան, պատմեցին հաւատացեալներին այն ամենը, ինչ որ Աստուած կատարել էր — ուրախ էին, որ հեթանոսներն էլ քրիստոնեայ էին դառել:

10. ՀԵԹԱՆՈՍ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

50 թ.

ա. Հեթանոս քրիստոնեաների խնդիրը

Պօղոսի դարձից ետոյ՝ Անտիոքում հաւատացեալների մէջ մի խնդիր վիճաբանութեան նիւթ դարձաւ — հրէայ քրիստոնիաներից ոմանք ասում էին հեթանոս քրիստոնեաներին. «Մինչև որ Մովսէսի օրէնքի համաձայն չթլպատուէք, մինչև օրէնքն ամբողջապէս չկատարէք, չէք կարող փրկուել»: Պօղոսը և Բառնաբասը շատ աշխատեցին համոզելու նրանց, որ առանց օրէնքները կատարելու հեթանոսները կարող են Յիսուսին հաւատալով ուղղակի քրիստոնեայ դառնալ, բայց իզուր: Վերջը որոշուեց Պօղոսի և Բառ-

նաբասի հետ մի քանի հոգի երուսաղէմ գնան առաքեալների մօտ՝ այս խնդրի համար նրանց հեղինակաւոր խօսքը լսելու։ Քրիստոնեայ համայնքը ճանապարհ ձգեց սրանց։ Պրանք անցան Փոլնիկէի և Սամարայի միջով և այնտեղի քրիստոնեաներին ևս պատմեցին, որ հեթանոսները դարձել են — ամենքին էլ մեծ ուրախութիւն պատճառեց այս լուրը։ Երբ երուսաղէմ հասան, առաքեալները սիրով ընդունեցին նրանց։ Այս խնդրի մասին առաքեալներից և երեցներից ժողով կազմուեց 50 թուականին։ Փարիսեցի հաւատացեալներից ոմանք պնդում էին, թէ հեթանոսութիւնից քրիստոնէութեան դարձածներին անպատճառ պէտք է թլպատել և պատուիրել, որ Մովսիսի օրէնքները լրիւ պահեն։ Երկար վիճաբանութիւն եղաւ — ամեն կողմ իւր կարծիքն էր պաշտպանում։ Այն ժամանակ Պետրոսը ոտի կանգնեց և այսպէս խօսեց. «Եղբայրներ, ձեզ քաջ յայտնի է, որ սրանից մօտաւորապէս 8 տարի առաջ, Աստուած որոշեց իմ բերանով յայտնել հեթանոս Կոռնելիոսին և նրա մարդոց աւետարանի խօսքը։ Աստուած ինքը վրկայեց, որ նրանք ևս արժանի են և զրա համար էլ Սուրբ Հոգին ուղարկեց նրանց համար, ինչպէս և մեզ։ Ոչինչ խտրութիւն չարաւ մեր և նրանց մէջ — այն հաւատը, որ հեթանոսներն ունէին, նրանով էլ փրկուեցին։ Ինչո՞ւ էք

Աստուծոն փորձում։ Թէ նա թոյլ կտայ մի այլ որոշում անելու՝ քան թէ ինքն արել է։ Օրէնքի ծանր լուծը դնում էք հեթանոս քրիստոնեաների ուսին, մի լուծ, որ ոչ մեր հայրերը և ոչ մենք կարողացանք տանել։ Մենք՝ թլպատութիւնից քրիստոնեայ դարձածներս, ինչպէս և հեթանոսները, հաւասարապէս հաւատում ենք, որ Յիսուս Քրիստոսի շնորհովը պիտի փրկուենք»։ Պետրոսի կարծիքը մեծ տպաւորութիւն արաւ ուկնդիրների վրայ — լուեց բազմութիւնը։ Այնուհետեւ Բառնաբասը և Պօղոսը պատմեցին, թէ Աստուած ինչպիսի նշաններ և հրաշքներ է գործել իրանց ձեռովը հեթանոսների մէջ։

բ. Առաջին եկեղ. ժողովը Երուսաղէմում

Երբ Բառնաբասը և Պօղոսը վերջացրին իրանց խօսքը, ժողովի նախագահ Յակովբոս առաքեալը յարուցած խնդրին մի որոշում տալու համար՝ ասաց — եղբայրներ, ինձ լսեցէք, Սիմօն Պետրոսը պատմեց, որ Աստուած ինքը խտրութիւն չզրաւ մեր և հեթանոսների մէջ։ Բացի սրանից չին՝ Ուխտի մարգարէները ևս նոյնն են հաստատում։ Ուստի ես ևս յարմար եմ համարում գժուարութիւն չյարուցանել հեթանոսութիւնից քրիստոնէութեան դարձածներին, այլ՝ թուղթ գրել նրանց և պատուիրել կարևորը։

Գ. Ժողովի վճիռը

Այս որոշումը ամենքն էլ հաւանեցին և վրձ-
ռեցին իրանցից ընտրուած մարդիկ ուղարկեն
Անտիոք՝ Բառնաբասի և Պողոսի հետ: Ուղար-
կուած մարդկանցից մինը Բարսաբա, որը և Յու-
դա էր կոչուած, իսկ միւսը Շիղան էր, երու-
սաղէմի քրիստոնեաներից յարգուած մի անձն:
Թուղթը գրեցին յունաց լեզուով, որովհետեւ Ան-
տիոքումն այդ լեզուն ամենին հասկանալի էր:
Նախագահ Յակսվբոսն ստորագրեց: Ահա թղթի
պատճէնը. «Առաքեալներից և երեցներիցս ող-
ջոյն Անտիոքի Հեթանոսութիւնից քրիստոնէու-
թեան դարձած քրիստոնեայ եղբայրներին: Մենք
լսեցինք, որ Հրէաստանից եկած մի քանի մար-
դիկ առանց մեզ, ինքնագլուխ ձեզ մօտ են ե-
կել և խռովել են ձեր մտքերը՝ որպէս թէ հե-
թանոսութիւնից քրիստոնէութեան դարձողները
պէտքէ թլպատուեն և Մովսէսի օրէնքները լրիւ
պահեն: Դուք այդ խնդիրը պարզելու համար
ուղարկել էիք Բառնաբասին և Պողոսին մեզ մօտ
որպէս պատգամաւորներ: Ժողով եղաւ այդ մա-
սին և որոշուեց վճիռը գրով յայտնելու ձեզ:
Նոյնը բերանացի աւանդելու համար, որոշեցինք
Բառնաբասի և Պողոսի հետ ուղարկել առանձին
ընտրուած մարդիկ, այն է Յուդային և Շիղա-
յին: Սուրբ Հոգուն և մեզ ևս հաճոյ թուեցաւ,

որ աւելորդ բեռը չդնենք ձեր ուսերին՝ բացի
կարեւոր բաներից»: Սրանք գնացին Անտիոք, հա-
ւատացեալներին ժողովեցին, թուղթը կարդացին
— ամենքն էլ ուրախացան այս մխիթարութեան
համար:

11. ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՈՒՂԵ-
ԻՈՐՈՒԹԻՒՆԸ
50—54 թ.

ա. Ուղեստրութիւն Փոքր-Ասիայի միջով

Պողոսը և Բառնաբասը մի ամբողջ տարի Ան-
տիոքումն էին և այդ ժամանակամիջոցում շա-
րունակ քարոզում էին աւետարանը: Յիսուն և
մէկ թուականին՝ Պողոսն ու Բառնաբասը ցանկա-
ցան կրկին անգամ այցելել այն քաղաքները, ուր
քարոզել էին և եկեղեցիներ կազմել: Բառնաբա-
սը կամենում էր իւր ազգական Յովհաննէսին
(Մարկոս մականունեալ) ևս հետն առնել, բայց
Պողոսը հակառակում էր՝ ասելով— երբ նա մի
անգամ բաժանուեց մեզնից, այլ ևս չպիտի
գայ: Անհամաձայնութիւն յառաջացաւ և իրա-
րից բաժանուեցան: Բառնաբասը Մարկոսին
հետն առաւ, անցաւ Կիպրոս, իսկ Պողոսը Շի-
ղայի հետ քաղաքէ քաղաք քարոզելով՝ այցե-
լեց քրիստոնէական եկեղեցիները և նրանց ա-
ւելի հաստատեց իրանց հաւատոյ մէջ:

Պօղոսը եկաւ Դերբէ և Լիւստրա: Այստեղ մի հաւատացեալ կար՝ անունը Տիմոթէոս, որի մայրը քրիստոնեայ էր, իսկ հայրը հեթանոս: Սա բարի համբաւ ունէր թէ Լիւստրիայի և թէ Իկոնիայի քրիստոնեաների մէջ: Պօղոսը սրան իւր հետն առաւ: Որ քաղաքիցն էլ անցնում էին, աւանդում էին տեղացի քրիստոնեաներին պահելու այն բոլոր որոշումները, որ եղած էին Նրուսաղէմում առաքեալների և երեցների ձեռով: Քրիստոնեաները զօրանում էին իրանց հաւատի մէջ և նրանց թիւը օր ըստ օրէ աւելանում էր: Այստեղից անցան Փռիւգիա, մտան Գաղատացւոց երկիրը, բայց ոչ մի տեղ չքարոզեցին: Վերջը եկան Տրովադա քաղաքը:

Այստեղ Պօղոսին տեսիլքում մի մակեդոնացի երեաց, որ ասում էր. «Անցիր Մակեդոնիա և օգնիր մեզ՝ փրկելու մեր ոգիները»: Պօղոսը պատմեց այս տեսիլը իւր ուղեկցին: Նրանք այնպէս հասկացան, որ Աստուած հրաւիրում է իրանց Մակեդոնիա անցնել և քարոզել աւետարանը, ուստի Տրովադայից եկան Մակեդոնիայի Գլխաւոր քաղաքը՝ Փիլիպպէ:

բ. Պօղոսը Փիլիպպէում

Այստեղ մի քանի օր մնալուց ետոյ՝ շաբաթ օրը քաղաքից դուրս գնացին դէպի գետափը, ուր տեղացիները սովոր էին աղօթելու: Այստեղ

մի աստուածավախ կին՝ Լիդիա անունով, ծիրանավաճառ, ցանկութիւն յայտնեց լսելու Պօղոսի քարոզութիւնը: Պօղոսը խօսեց: Հետեանքն այն եղաւ, որ Լիդիան և իւր տունը քրիստոնեայ դարձան: Սա աղաչում էր Պօղոսին իւր տուն գնալու և այնքան խնդրեց՝ մինչև որ համաձայնեց:

Մի օր, երբ աղօթքի էին գնում, մի դիւահար աղախին պատահեց նրանց: Սա գուշակութիւններ էր անում և դրա համար էլ վարձ էր ստանում ուրիշներից: Այդ վարձից օգտւում էին դիւահարի տէրերը: Դիւահար աղախինը ճանապարհին Պօղոսին իւր աշակերտների հետ որ տեսաւ, աղաղակեց և ասաց. «Այս մարդիկն Աստծու ծառաներն են, եկել են ձեզ փրկութեան ճանապարհը քարոզելու»: Այս բանը մի քանի անգամ կրկնեց: Պօղոսը հիւանդ կնոջը բժշկեց: Աղախնի տէրերը, երբ տեսան, որ իրանց եկամտի աղբիւրը կապկասի, զրգուեցան, Պօղոսին և Շիղային տարան քաղաքի դատաւորների մօտ և ասացին. «Այս մարդիկ շփոթութիւն են ձգում մեր քաղաքում, մեզ նոր հաւատ են քարոզում: Իրանք հրէաներ են, բայց հռովմայեցիներին այնպիսի բաներ են քարոզում, որ արժան չէ ոչ ընդունել և ոչ կատարել»: Ամբոխը յուզուեցաւ: Գլխաւորները պատառեցին իրանց հանդերձները, հրամայեցին ծե-

ծել և բանտարկել: Բանտապետին պատուիրեցին, որ զգուշութեամբ պահէ: Սա էլ հրամանի համաձայն՝ ներքին բանտը ձգել տուաւ առաքեալին և պատուիրեց ոտները կոճղի մէջ ամրացնել:

Կէս գիշերին Պօղոսը և Շիղան աղօթում և օրհնում էին Աստծուն: Բանտարկեալները ուշադրութեամբ լսում էին նրանց: Յանկարծ մեծ շարժ եղաւ բանտի մէջ, բոլոր կողպած դռները բացուեցան և ամենքի շղթաներն էլ արձակուեցան: Բանտապետը շարժի ձայնից զարթնեց, տեսաւ որ բանտի դռները բաց են և կարծելով թէ բանտարկեալները փախել են, յուսահատութիւնից սուրը քաշեց, որ անձնասպան լինի: Պօղոսն այս բանը տեսնելով՝ բարձր ձայնով ասաց. «Մի վախենար, մենք ամենքս էլ այստեղ եեք»: Ճրագ վեր առաւ, ներս վազեց և տեսաւ որ ամենքն էլ այնտեղ են, ընկաւ Պօղոսի և Շիղայի ոտները ու ասաց. «Ասացէք, ինչ անեմ, որ ես փրկուեմ»: Նրանք էլ ասացին. «Հաւատա՛ Յիսուս Քրիստոսին և կփրկուես»: Պօղոսը քարոզեց նրա տանեցւոցը և լուաց նրանց մարմնի վերքերը: Բանտապետն ամբողջ ընտանիքով մկրտուեց: Ապա տուն հրաւիրեց և իւր ընտանիքի հետ միասին ուրախանում էին, որ քրիստոնեայ են դառել:

Առաւօտեան վաղ՝ դատաւորները մարդ ուղարկեցին բանտը, որ առաքեալներին ազատեն:

Բանտապետը Պօղոսին յայտնեց դատաւորների կամքը, թէ իշխանութիւնը այժմ արձակում է ձեզ, ելէ՛ք և գնացէ՛ք: Պօղոսը պատասխան տուաւ և ասաց. «Մեզ՝ ազատ հռովմայեցի գրուած մարդկանցս հրապարակաւ ծեծել տուին, հիմա թաքստն են արձակում: Ոչ, թող իրանք գան և արձակեն մեզ»: Եկող մարդիկն այս բանը պատմեցին դատաւորներին: Սրանք, երբ լսեցին, որ բանտարկեալները հռովմայեցի են, վախեցան. եկան. աղաչում էին և ներողութիւն խնդրում: Երբ բանտից դուրս եկան, դատաւորները խընդրեցին, որ քաղաքից հեռանան: Առաքեալները բանտից դուրս եկան, գնացին Լիդիայի տունը, հաւատացեալներին այցելեցին, մխիթարեցին նրանց և ապա հեռացան:

գ. Պօղոսը Թեսաղոնիայում

Փիլիպպիից դուրս գալով՝ եկան Թեսաղոնիկէ քաղաքը, ուր հրէից ժողովարան կար: Պօղոսն, ըստ իւր սովորութեան, աղօթարան գնաց և երեք անգամ շաբաթ օրերը քարոզ խօսեց նրանց: Հին-Ուխտի գիրքը բաց էր անում և ցոյց էր տալիս, որ Քրիստոս պէտք է չարչարուէր և մեռէրներից յարութիւն առնէր և թէ Քրիստոսն այն Մեսիան է, որի մասին ես քարոզում եմ ձեզ: Քարոզի հետեանքն այն եղաւ, որ շատերը

հաւատացին Յիսուսին, ՚ի թիւս որոց հեթանոս պաշտոնեաներ, և անուանի կանայք:

Զհաւատացող հրէաներին դուր չեկաւ այս իւրողութիւնը, մի քանի փողոցային մարդկանց հետ քաղաքի մէջ շփոթութիւն ձգեցին. հաւաքուեցին քրիստոնեայ Յասովի տան առաջ, ուր Պօղոսը և Շիղան իջեանել էին և կամենում էին առաքեալներին հրապարակ տանել, որ հասարակ ժողովուրդը դատէ նրանց: Երբ առաքեալներին չգտան, Յասովին և նրա մօտ եղող հաւատացեալներին քաջ տալով տարան քաղաքապետի մօտ, աղմուկ բարձրացրին և ասում էին. «Այս աշխարհ շփոթեցողներն այստեղ՝ մեր քաղաքն էլ են եկել և Յասովը նրանց իւր տուն է ընդունել: Դրանք ամենքն էլ կայսեր հակառակ մարդիկ են — Յիսուս անունով մէկին թագաւոր են անուանում»: Խռովարարները յաջողեցին շփոթելու քաղաքացւոց և քաղաքապետի մտքերը, այնպէս որ վերջինս Յասովից երաշխաւորութիւն առնելով, արձակեց առաքեալներին:

Թեսաղոնիկէի քրիստոնեաները գիշերով Պօղոսին և Շիղային ճանապարհ ձգեցին դէպի Բերիա: Երբ տեղ հասան, Պօղոսը շաբաթ օրը ժողովարան գնաց քարոզելու: Այստեղ ժողովուրդն աւելի խելացի վարուեց՝ որովհետեւ առաքեալի քարոզը սիրով ընդունեցին, ուշադրութեամբ քննում էին, թէ Պօղոսի քարոզած մեռելներից

յարուցեալ Քրիստոսն ան Մեսիան է, որի մասին Հին-Ուխտում գրած է: Ժողովականներից շատերը քրիստոնեայ դարձան: Երբ Թեսաղոնիկէի հրէաներն իմացան, որ Պօղոսը Բերիայումն էլ քարոզում է, եկան և սկսեցին այստեղ էլ խռովել ժողովրդին: Հաւատացեալներն իսկոյն Պօղոսին նաւ նստացրին և Աթէնք ուղարկեցին, իսկ Շիղան և Տիմոթէոսը մի առ ժամանակ մնացին այնտեղ քրիստոնեաներին իրանց հաւատի մէջ զօրացնելու: Կարճ ժամանակից ետոյ պատուէր ստացան Աթէնք գնալու Պօղոսի մօտ:

Գ. Պօղոսն Աթէնքում


Պօղոսն Աթէնքում սպասում էր Շիղային և Տիմոթէոսին: Մինչև նրանց գալը ծանօթացաւ քաղաքի հետ: Երբ տեսաւ, որ կուռքերով լի է քաղաքը, սաստիկ զայրացաւ: Պօղոսն, ըստ իւր սովորութեան, շաբաթ օրերը ժողովարան էր գրնում և քարոզում հրէաներին և աստուածապաշտներին: Փողոցումն էլ ով պատահում էր, նրանց ևս քարոզում էր: Եպիկուրեան և ստիչիկեան փիլիսոփաներից մի քանիսը վիճարանում էին նրա հետ, իսկ ոմանք էլ ասում էին. «Այս դատարկաշրջիկը ի՞նչ է ուզում ասել»: Մի քանիսն էլ ասում էին. «Երևի մի նոր աստծու մասին է աւետարանում»: Այս պատճառով Պօղոսին տարան Արիսպագոս և ասացին. «Արդե՞ք

կարող ենք իմանալ, թէ այդ ինչ նոր վարդապետութիւն է, որի մասին դու խօսում ես: Քրքարողածը նորութիւն է մեղ համար»:

Պօղոսը կանգնեց Արիստագոսի մէջ և ասաց. «Ո՛վ անհասկացողներ, ես տեսնում եմ, որ դուք կրօնասէր մարդիկ էք. ես շրջեցի ամենուրէք. տեսայ ձեր աղօթատները և գտայ մի սեղան, որի վրայ գրած էր՝ անծանօթ Աստծուն: Ես քարոզում եմ հէնց այդ անծանօթ Աստծու մասին, որին դուք առանց ճանաչելու պաշտում էք: Այդ Աստուածը, որ ստեղծել է երկինքն ու երկիրը, ձեռագործ տաճարներում չէ բնակւում, մարդոց ձեռով պաշտուելու կարիք չունի: Երկրագնդիս վրայ բնակւող բոլոր ազգերին մի արիւնից ստեղծեց: Հէնց ձեր բանաստեղծներից էլ ոմանք ասացին, թէ նրա ազգիցն ենք: Արդ՝ որովհետև Աստծու ազգիցն ենք, չպիտի կարծենք, թէ աստուածութիւնը նման է ոսկու, արծաթի կամ քարէ արձանների, որոնց մարդկային միտքն է ստեղծել և մաիդկային ձեռք քանդակել: Աստուած տգէտ ժամանակների մարդոց արածները ներում է: Այժմ մարդոց ամենուրէք պատուիրում է ապաշխարել: Նա որոշել է մի օր, երբ աշխարհն արդարութեամբ պիտի դատէ այն մարդու ձեռով, որին մեռելներից յարութիւն տուաւ»:

Երբ մեռելների յարութեան մասին լսեցին ե-

պիկուրեանք և սագուգեցիք, սկսեցին ծաղրել,



իսկ նորութիւն սիրողներն ալ ասում էին. «Այդ

բանի մասին մենք դարձեալ կխօսենք քեզ հետ»։
Սրանից ետոյ Պողոսը հեռացաւ։ Քարոզի հետե-
ւանքն այն եղաւ, որ Արիսպագոսի անդամ Դիո-
նէսիոս Արիսպագացին, մի կին՝ Դամարիս ա-
նուանով և մի քանիսը քրիստոնեայ դարձան։

Ե. Պողոսը Կորնթոսում եւ վերադարձ

Պողոսն աթենացիներէից բաժանուեց և եկաւ
Կորնթոս քաղաքը։ Այստեղ պատահեց Պոնտացի
Ակիլղոս անուանով մի հրէի, որը իւր կին Պրիս-
կիլիայի հետ Իտալիայից նոր էին եկել, որովհե-
հետեւ Կլաւդիա կայսրը հրամայել էր հրէաներին
Հռովմից հեռանալ։ Պողոսը զնաց սրանց մօտ։
Եւ որովհետեւ Պրիսկիլիան և Պողոսը համարուեստ
էին՝ այծի մազից վրաններ պատրաստել գիտէին,
մնաց որանց մօտ և աշխատում էր նրանց հետ։
Ամեն շաբաթ օր քարոզում էր ժողովրդանոցում
հրէաներին և յոյներին։ Երբ վերջապէս Շիդան
և Տիմոթէսը եկան, Պողոսն աւելի սիրտ առաւ
քարոզելու հրէաներին։ Ունկնդիրները չընդու-
նեցին նրանց։ Այն ժամանակ Պողոսը հանգերձ-
ները թօթափելով՝ ասաց. «Երբ չէք հաւատում,
ձեր արիւնը ձեր գլուխը լինի, ես անպարտ եմ,
այսուհետեւ ես հեթանոսներին կքարոզեմ, որոնց
համար էլ առաքեալ եմ նշանակուել»։ Պողոսն
այստեղ տարի ու կէս մնաց և քարոզում էր հե-
թանոսներին։

Պողոսը Կորնթոսից եկաւ Եփեսոս քաղաքը.
ժողովրդանոց մտաւ և քարոզում էր հրէաներին։
Եփեսացիներին դուր եկաւ առաքեալի քարոզը,
ուստի խնդրեցին նրան, որ երկար ժամանակ
մնայ իրանց մօտ, բայց Պողոսը չկարողացաւ
մնալ, հրաժարական տուաւ՝ ասելով. «Առաջի-
կայ Հոգեգալստեան տօնին անպատճառ Երու-
սաղէմում պիտի լինեմ, Աստծով նորից կդառ-
նամ ձեզ մօտ»։ Եփեսոսից զնաց Կեսարիա, այ-
ցելեց այնտեղի քրիստոնեաներին և ապա իջաւ
Անտիոք։

12. ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՈՒՂԵ- ԻՐՐՈՒԹԻՒՆԸ

54 — 58 թ.

ա. Պողոսը Դադատիայում, Եփեսոսում եւ Կո-
րնթոսում

Ասորական Անտիոքում մի առ ժամանակ մը-
նալուց ետոյ, դուրս եկաւ Ղուկասի, Տիմեթէո-
սի և Տիտոսի հետ, որ կարգով շրջէ Դադատիան,
Փուլզիան և նախկին ճանապարհորդութեան ժա-
մանակ շահած հաւատացեալներին ամրապնդէ
իրանց հաւատի մէջ։ Վերջն եկաւ Եփեսոս։ Այդ-
տեղ պատահեց Աղէքսանդրացի մի հրէի՝ Ապո-
ղոս անուանով, որ մի ճարտարախօս մարդ էր և

խիստ հմուտ Հին-Ուխտի պատմութեանը: Սա արդէն Աղէքսանդրիայում ծանօթացել էր Յիսուսի վարդապետութեան հետ. ոգևորուած քարոզում էր Փրկչի մասին, որքան զօրում էր նրա գիտեցածը: Տեղեկութիւն ունէր միայն Յովհաննէսի մկրտութեան մասին: Սա ժողովրդանոց գնաց և սկսաւ համարձակ կերպով քարոզել: Ակիւղան և Պրիսկիլան, երբ տեղեկացան այդ մասին, իրանց մօտ կանչեցին և Աստծու ճանապարհներն աւելի որոշ բացատրեցին նրան: Իսկ երբ կամեցաւ Աքայիա գնալ, յանձնարարական թուղթ գրեցին այնտեղի քրիստոնեաներին, որ ընդունեն: Երբ տեղ հասաւ, Հոգւոյն Սրբոյ շնորհովը շատ օգնեց հաւատացեալներին՝ զօրացնելով նրանց հաւատը, այնպէս որ Պօղոսի ետոյ գրուածն արդարանում է, թէ. «Ես ցանեցի, Ապօղոսը ջուր տուաւ, իսկ Աստուած աճեցրեց»: Սա հրապարակով խիստ յանդիմանում էր հրէաներին և Սուրբ գրքի վկայութեամբ ցոյց էր տալիս նրանց, որ Յիսուս խոստացեալ Մեսիան է: Ապօղոսի Կորնթոս եղած ժամանակը Պօղոսը Փռիզիայից եկաւ Եփեսոս, որտեղ գտաւ մի քանի հաւատացեալներ և հարցրեց նրանց: «Արդե՞ք Սուրբ Հոգին ընդունեցիք, երբ քրիստոնեայ դարձաք»: Նրանք պատասխանեցին. «Մենք չենք էլ լսել, թէ Սուրբ Հոգի կայ»: Պօղոսը հարցրեց. «Հապա ինչո՞վ մկրտուեցաք», նրանք

պատասխանեցին. «Յովհաննէսի մկրտութիւնով»: Պօղոսն ասաց. «Յովհաննէս ապաշխարութեան մկրտութիւնով էր մկրտում և ասում էր ժողովրդին, որ իրանից ետոյ եկողին պիտի հաւատան, այսինքն Յիսուս Քրիստոսին: Երբ այս բանը լսեցին, Յիսուս Քրիստոսի անունով մկրտուեցան: Պօղոսը ձեռը դրաւ նրանց գլխին, իսկոյն Սուրբ Հոգին լիջաւ նրանց վրայ, սկսեցին զանազան լեզուներ խօսել և մարգարէանալ: Մրկրտուողները տասն և երկու հոգի էին: Սրանից ետոյ երեք ամիս շարունակ ազատ կերպով ժողովրդանոց էր գնում և քարոզում Աստծու արքայութեան մասին—հակառակող չկար:


Երեք ամսից ետոյ մի քանիսը դիտմամբ ըսկսեցին բամբասել Պօղոսին ժողովրդի առաջ՝ որպէս թէ սրա ցոյց տուած փրկութեան ճանապարհը սխալ է, ուստի Պօղոսը հեռացաւ այդ ժողովրդանոցից, քարոզում էր Տիւրան անունով մի հեթանոս քրիստոնէի ժողովարանում, որը յայտնի անձն էր Եփեսոսում: Երկու ամբողջ տարի Պօղոսը քարոզում էր Տիւրանի ժողովարանում—անթիւ հրէա և յոյն հեթանոսներ քրիստոնեայ դարձան:

Հաւատացեալներից շատերը գալիս էի Պօղոսի մօտ, խոստովանում էին իրանց սխալները: Շատ կախարհներ բերում էին իրանց գրքերը և հրապարակով այրում էին, որոց զինը երբեմն յի-

սուն հազար արծաթ արժէր: Սրանից ետոյ Պօղոսը մտադրուեցաւ շրջել Մակեդոնիան և Աքայիան և ապա գնալ Երուսաղէմ, որից ետոյ ցանկութիւն էր յայտնում և Հռովմ գնալ: Բայց այնտեղի հաւատացեալներին զօրացնելու համար ուղարկեց Տիմոթէոսին, իսկ ինքը մի առ ժամանակ մնաց Ասիայում:

Տիմէթէոսի հեռանալուց ետոյ՝ հակառակորդները մեծ աղմուկ բարձրացրին Եփեսոսում: Դիմետրիս անունով մի արծաթագործ՝ Եփեսոսում եղած Արտեմիս կռքի մեծ տաճարի ձևով արծաթից փոքրիկ տաճարներ էր շինում և վաճարում: Սա մեծ շահ ունէր այդ գործից և դրա համար էլ լաւ վարձատրում էր բանուորներին: Սա ժողովեց իւր արուեստի մարդկանց, մեծ աղմուկ արաւ և ասաց. «Դուք գիտէք, որ այս գործիցն ենք հաց աշխատում, Պօղոսը եփեսացիներին և բոլոր ասիացիներին քարոզում է, թէ ձեռով շինածները աստուածներ չեն: Այստեղ ոչ թէ միայն մեր շահն է վտանգւում, այլև մեծ Արտեմիսի տաճարի նշանակութիւնն էլ վայր է ընկնում»: Արծաթագործ Դիմետրիսը ամբողջ քաղաքը ոտի կանգնացրեց, ամբոխը դիմեց դէպի թատրոն, յարձակուեցան Գալիսսի և Արիստարքոս մակեդոնացու վրայ, որոնք Պօղոսի ճանապարհորդակիցներ էին: Պօղոսը կամեցաւ ինքը մտնել թատրոն, որ ազատէ իւր պատճառով

բռնուածներին և իրան նրանց փոխանակ խռովարարների ձեռը մատնէ, բայց Եփեսոսի քրիստոնեաները չթողին: Պօղոսի բարեկամները մարդ



ուղարկեցին նրա մօտ և խնդրում էին թատրոն չմտնել: Ամբոխը խռնուած էր—ամեն մինը մի բան էր ասում: Շատերը չգիտէին, թէ ինչու

համար են հաւաքուած: Աղէքսանդրոս անունով մի հրէա ամբոխին հանդարտացրեց և ասաց. «Ով եփեսացիներ, ամենքս էլ գիտենք, որ Արտեմիս աստուածուհին եփեսոսի պաշտպանն է. ոչ ոք չի համարձակուի նրան անպատուել, հանգստացէք, խաղաղուեցէք: Այս մարդիկը՝ Գայիոսը և Արիստարքոսը, որոց բերել էք այստեղ, ոչ կռաւներ կողոպտողներ են և ոչ ձեր աստծուն հայհոյել են: Ուրեմն, եթէ Դիմետրիոսը և նրա արուեստի մարդիկը մէկի հետ գործ ունեն, այստեղ առեան կայ, թող գնան դատաւորների մօտ և իրանց գանգատը յայտնեն, խնդիրը ժողովում օրինաւոր կերպով կվճռուէ—մենք ևս պատասխանատու ենք այսօրուայ խռովութեան համար: Ի՞նչ ասենք, եթէ մեզ հարցնեն, թէ այս մարդոցն ինչո՞ւ էք բռնել»: Այս խօսքերից ետոյ ժողովուրդը ցրուեց:

Ազմուկը դադարելուց ետոյ Պօղոսն աշակերտներին կանչեց, հրաժարական ողջոյն տուաւ նրանց և գնաց Մակեդոնիայի միջով Յունաստան ու երեք ամիս մնաց Կորնթոսում:

բ. Հրաժեշտ եփեսոսի երեցներից

Պօղոսը որոշել էր Հոգեգալստեան տօնին երուսաղէմում լինել, ուստի մտադրուեց Ասիա դառնալ: Բայց որովհետեւ հրէաները դարան էին լարել, Կորնթոսից դարձաւ Մակեդոնիա, Տրո-

վադա, Միլետ, ուր և նաև նստեց: Առաջուց մարդ ուղարկեց եփեսոս և հրաւիրեց եկեղեցւոյ երեցներին նաւահանգստում, որ միանգամ ևս յուսադէ նրանց: Երբ երեցները եկան, Պօղոսն ի խորոց սրտէ խօսեց նրանց հետ և ասաց. «Ձեզ յայտնի է, որ Ասիա եկած օրիցս շարունակ ձեզ հետ եմ եղել: Աստծուն ծառայել եմ ամենայն խոնարհութեամբ, քանիցս արտասուել եմ և զպիսի նենգութիւններ պատահեցան հրէաների կողմից: Բայց չնայելով այս ամենին, ես ձեզ միշտ ուսուցել եմ բարին և օգտակարը: Հրէաներին, ինչպէս հեթանոսներին ցոյց եմ տուել, թէ ինչպէս պիտի ապաշխարել առ Աստուած դառնալու համար, ցոյց եմ տուել նմանապէս, թէ որպիսի հաւատ պիտի ունենան առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, որպէսզի իրանց մեղքերին թողութիւն լինի: Մի ներքին ձայն մղում է ինձ դէպի Երուսաղէմ—թէ այնտեղ ինչ կատարէ ինձ, չգիտեմ: Կապանքներ, նեղութիւններ գիտեմ սպասում են ինձ Երուսաղէմում, բայց ոչ մի արգելք չի կարող լինել ինձ այնտեղ գնալու: Ես իմ անձն անգամ չեմ խնայի, որպէսզի կատարեմ Յիսուս Քրիստոսիցն ստացած պաշտօնը՝ վկայելու որ աւետարանը Քրիստոսի մէջ յայտնուած Աստծու շնորհն է: Այժմ հեռանում եմ ձեզնից և գուցէ այլ ևս միմեանց չտեսնենք: Այս խորհրդաւոր օրը թող վը-

կայ լինի, որ ես ոչ մի տեղ երկիւղ չեմ կրել քարոզելու ձեզ Աստծու կամքը: Այսուհետև ձեզ է մնում իմ պաշտօնը, ուստի զգոյշ եղէ՛ք՝ թէ ձեր անձի և թէ ձեր հօտի վերաբերութեամբ: Ես գիտեմ՝ որ իմ հեռանալուց ետոյ յափշտակող գայլեր կգան ձեր մէջ և չեն խնայի հօտը: Հէնց ձեր միջից մարդիկ կվերկենան և կգայթակղեցնեն ոմանց: Ուստի արթուն կացէ՛ք այնպէս, ինչպէս ես երեք տարի շարունակ չղաղադարեցի ամեն մինիդ արտասուքով խրատելու: Այժմ յանձնում եմ ձեզ Աստծուն: Դուք գիտէք, թէ իմ և թէ ինձ հետ եղողների պարէնը այս ձեռներովն եմ վաստակել: Ամեն բան ցոյց տուեցի ձեզ իմ անձնական օրինակով, թէ ինչպէս պիտի աշխատէք, տկարներին հոգ տանէք և յիշէք Աստծու խօսքը, որ ասում է—տալն առնելուցը լաւ է»։ Երբ այս ասաց, ծունր դրաւ ամենի հետ և աղօթք արաւ: Ամենքն էլ լաց եղան, Պօղոսի վզովն ընկան և համբուրեցին: Յաւում էին մանաւանդ այն խօսքի համար, որ ասում էր, թէ այլ ևս չեն տեսնելու իրան: Այսպէս ճանապարհ դրին նրան մինչև նաւը:

Եփեսոսի քրիստոնեայ եղբայրներին հրաժեշտ աւուց ետոյ՝ Պօղոսը նաւեց Կիպրոսի հարաւային կողմից դէպի Ասորիք և իջաւ Տիւրոս քաղաքը: Այստեղ քրիստոնեաների հանդիպեց, եօթն օր նրանց մօտ մնաց, մխիթարեց և զօրաց-

րեց նրանց հաւատը: Տիւրոսի քրիստոնեաները մարգարէական հոգւով լցուած՝ զգուշացնում էին Պօղոսին, որ Երուսաղէմ չգնայ: Տիւրոսից



հեռանալիս քրիստոնեաները կանանցով և որդիներանցով ծովափը գնացին ճանապարհ դնելու առաքեալին, ուր ամենքը չոքեցին, աղօթք արին և այսպէս հրաժարուեցան իրարից:

գ. Պօղոսը Կեսարիայում

Պօղոսը Տիւրոսից նաւեց դէպի Կեսարիա և իջաւ Փիլիպպոս սարկաւազի տանը: Սա ունէր չորս կոյս աղջիկ, որոնք մարգարէական շնորհ ունէին՝ գալոցը գուշակելու: Պօղոսն այստեղ երկար մնաց: Այդ ժամանակ Հրէաստանից մի մար-

գարէ եկաւ՝ անունը Ագաբոս, վեր առաւ առաքելի գօտին, նրանով կապեց իւր ձեռներն ու ոտները և մարգարէանալով՝ ասաց. «Այս գօտու տիրոջը հրէաները երուսաղէմում այսպէս պիտի կապեն և հեթանոսների ձեռը մատնեն»։ Այս որ լսեցին քրիստոնեաները, լացով սկսեցին նրան աղաչել, որ երուսաղէմ չգնայ, բայց Պօղոսն ասաց. «Ի՞նչ էք անում, ինչո՞ւ էք լաց լինում և իմ սիրտը ճմլում։ Ես Յիսուս Քրիստոսի համար պատրաստ եմ մեռնելու՝ նոյն իսկ երուսաղէմում»։ Պօղոսը նաևեց երուսաղէմ։

13. Պ Օ Ղ Ո Ս Ի Կ Ա Լ Ա Ն Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ը
58—64 թ.

ա. Պօղոսին կալանաւորում են

Պօղոսը 58 թուականի մայիսի 15-ին երուսաղէմ մտաւ։ Քրիստոնեաները սիրով ընդունեցին նրան։ Հետեւեալ օրը իւր ուղեկիցների հետ գնաց Յակովբոսի մօտ, ուր ժողովի հաւաքուեցան եկեղեցւոյ բոլոր երեցները։ Պօղոսը ողջունեց ժողովականներին և մանրամասնօրէն պատմեց՝ ինչ որ Աստուած նրա ձեռով գործել էր հեթանոսների մէջ։ Երբ այս բանը լսեցին, բոլորն էլ միաբերան փառաւորում էին Աստծուն։

Հոգեգալստեան տօնից եօթն օր առաջ՝ հեռի տեղերից եկող ուխտաւորների համար հանդէսներ էին կատարւում տաճարում։ Ահա այդ ժա-

մանակ ասիացի հրէաները տեսան Պօղոսին տաճարում. զրգուեցին ամբոխին. յարձակուեցան նրա վրայ և աղաղակում էին. «Օգնեցէք, ով իսրայէլացիներ, այս այն մարդն է, որ ամեն ուրեք քարոզում է հակառակ ժողովրդի, օրէնքի և այս տեղի՝ մինչև անգամ հեթանոսներին տաճար բերաւ և պղծեց սուրբ տեղը։ Առաջուց տեսել էին, որ Պօղոսի ուղեկից քրիստոնեայ Տրոփիմոս եփեսացին քաղաքում շրջում էր նրա հետ, կարծում էին, թէ նրան տաճար էլ մըտցրած կլինի։ Հերովդէսի շինած տաճարը մի քանի գաւիթներ ունէր—1. քահանաների, 2. այր հրէաների, 3. կին հրէաների և 4. հեթանոսների համար։ Հակառակորդները ժողովրդին զրգուեցու համար տարածում էին, թէ Պօղոսը իւր ուղեկիցին մտցրել է այր հրէաների գաւիթը, ուր հեթանոսներն իրաւունք չունէին։ Այս պատճառով ամբողջ քաղաքը դրդեցաւ. ամբոխը խռնունուեցաւ. Պօղոսին բռնեցին և քաշ տուին, տաւրան հեթանոսների գաւիթը, որպէսզի ծիսակատարութիւնը չխանգարեն իրանց աղմուկներով։ Այստեղ կամենում էին Պօղոսին քարկոծել։

Տաճարին կից հռովմէական զօրանոց կար՝ Անտօնիոսի աշտարակ անունով։ Երբ լուրը հասաւ հռովմայեցի հազարապետին, թէ երուսաղէմը խռովել է, իսկոյն զինւորներ առաւ և շտապեց խռովութեան տեղը՝ կարծելով թէ հրէաներն ա-

պատամբուել են: Ամբոխը, երբ տեսաւ զինուորուած մարդկանց՝ երկիւղից ետ կանգնեց և այլ ևս չէր ծեծում Պօղոսին: Հազարապետը կարծելով թէ մարդասպանի հետ գործ ունի, բռնեց Պօղոսին, հրամայեց երկու շղթայով կապել և ապա դարձաւ ամբոխին ու հարցրեց. «Ո՞վ է սա, ի՞նչ է արել»: Ամբոխի միջից ամեն մինը մի բան էր աղաղակում— ոչինչ չէր կարելի հասկանալ, ուստի հրամայեց, որ Պօղոսին տանեն Անտօնիոսի աշտարակը: Երբ տաճարի սահմանից դուրս եկան և հռովմէական զօրանոցի աստիճաններին հասան, զօրականները ստիպուեցան ոյժ գործ դնել, որովհետեւ կատաղած ամբոխը ուզում էր պատառել նրան: Երբ Պօղոսը զօրանոց մտաւ, ուր այլ ևս երկիւղ չունէր հրէաներից, հազարապետին դիմեց և իրա հետ խօսելու իրաւունք խնդրեց: Հազարապետը հարցրեց. «Յունարէն գիտես արդե՞ծք, դու այն եգիպտացին չե՞ս, որ 14 ամիս առաջ խռովութիւն ձգեց և չորս հազար աւագակ մարդիկ ոտի հանեց»: Պօղոսը պատասխանեց. «Ես հրէայ եմ, Կիլիկիայի Տարսոն քաղաքից, իրաւունք տուր ինձ, որ այս ժողովրդի հետ խօսեմ»:

Հազարապետը հրաման տուաւ: Պօղոսն աստիճանների վրայ կանգնեց, ձեռը դէպի ժողովուրդը շարժեց՝ իբրեւ նշան լռելու և ապա սկսաւ երբայեցւոց լեզուով այսպէս խօսել. «Արք եղ-

բարք, լսեցէք ինձ»: Երբ իմացան, որ երբայեցւոց լեզուով է խօսում, լսեցին և ուշադրութեամբ էին լսում: Պօղոսը շարունակեց. «Ես



հրէայ եմ. ծնուած եմ Կիլիկիայի Տարսոն քաղաքում. ուսել եմ Երուսաղէմում մեծ ուսրբի Գամաղիէլի մօտ. հայրենի օրէնքի հոգւով եմ

դաստիարակուած և Աստծու մասին նախանձա-
ւոր, ինչպէս և դուք ամենքդ: Քրիստոնեայ
մարդկանց և կանանց կապել էի տալիս և բանտ
ուղարկում: Այդ մասին կվկայեն քահանայա-
պետը և ծերերի ամբողջ ժողովը, որից թըղ-
թով իրաւունք ստացայ՝ Դամասկոս գնալու և
այնտեղ եղած հաւատացեալներին կապած երու-
սաղէմ ուղարկելու: Երբ Դամասկոսին մօտեցայ,
կէս օրուայ դէմ յանկարծ սաստիկ լոյս փայ-
լեց: Ես վայր ընկայ գետին և մի ձայն լսեցի,
որ ասում էր Սաւոլ, Սաւոլ, ինչո՞ւ ես հա-
լածում ինձ: Ես հարցրի. «Տէր, ո՞վ ես դու»:
Ձայնը պատասխանեց ինձ. «Ես Յիսուս Նազով-
րեցին եմ, որին դու հալածում ես»: Իմ ուղե-
կիցները երկիւղով լցուեցան, լոյսը տեսնում-
էին, բայց ինձ հետ խօսողի ձայնը չէին լսում:
Այն ժամանակ ես հարցրի—Տէր, ի՞նչ անեմ և
պատասխան ստացայ—վեր կաց և գնա Դամաս-
կոս, այնտեղ կպատմուի քեզ, թէ ի՞նչ պիտի ա-
նես... և պատմեց ամեն ինչ, թէ ինչպէս երու-
սաղէմացիք չեն լսել իրան, սպառնացել են և նա
փախել է Տարսոս: Սկզբում լսում էին, բայց
երբ տեսան, որ իրանց մեղադրում է, աղմուկ
բարձրացրին և ասում էին. «Այսպիսի մարդը
մեռնելու արժանի է»: Այս ասացին, հանդերձ-
ները հանեցին՝ կարծես ուղում էին քարկոծել:
Երբ այս նոր աղմուկը տեսաւ հազարապետը,

հրամայեց Պօղոսին զօրանոց տանել և մտրակե-
լով ստիպել առաքեալին խոստովանելու իւր յան-
ցանքը: Երբ կաշէ փոկերով ծեծում էին, Պօղոսն
ասաց հարիւրապետին. «Արդե՞ք իրաւացի է, որ
դուք մի հռոմայ քաղաքացու և դեռ յանցանքը
չհաստատուած մարդու ծեծում էք»: Երբ հա-
րիւրապետը իմացաւ Պօղոսի Հռովմայ քաղաքա-
ցի լինելը, մօտեցաւ հազարապետին և ասաց.
«Ձգուշացիր, այս մարդը Հռովմայ քաղաքացի է»:
Հազարապետն իսկոյն մօտ եկաւ և հարցրեց.
«Իրա՞ւ է, որ դու Հռովմայ քաղաքացի ես»: Պօ-
ղոսը պատասխանեց. «Այո՞»: Հազարապետն ա-
սաց. «Ես մեծաքանակ դրամով եմ ձեռք բերել
այդ իրաւունքը, չեմ կարծում թէ դու կարողա-
նայիր այդ ճանապարհով նոյն իրաւունքն ստա-
նալու»: Պօղոսը պատասխանեց. «Ընդհակառակն՝
ես ոչ թէ դրամով եմ ստացել այդ իրաւունքը,
այլ իբրեւ Հռովմայ քաղաքացի եմ ծնուել»: Հա-
զարապետն այլ պատուէր տուաւ և Պօղոսին
մտրակելու պատրաստուած մարդիկն իսկոյն հե-
ռացան: Հազարապետը, երբ ճշտեց Պօղոսի Հը-
ռովմայ քաղաքացի լինելը, շատ վախեցաւ, ո-
րովհետեւ առանց նրա յանցանքը հաստատելու
կապել էր տուել՝ հակառակ հռովմէական օրի-
նաց:

Հետեւեալ օրը, այսինքն մայիսի 18-ին հազա-
րապետը կամեցաւ ճիշտ իմանալ, թէ հրէաներն

ինչո՞ւ համար են գանգատուում Պողոսից: Բանտարկեալի կապանքներն արձակել տուաւ, հրամայեց քահանայապետներին և ատենի բոլոր անդամներին կանչել: Պողոսին էլ զօրանոցից հանեց, հետն առաւ և տարաւ այն ատենանը, ուր մի ժամանակ Յիսուսին էին դատել: Պողոսն ատենից նայեց նրանց և ասաց. «Եղբայրներ, ես մանկութիւնիցս մինչև այսօր ուղիղ մտքով եմ ընթացել Աստծու առաջ»: Անանիան նկատողութիւն համարեց այս խօսքերը, ուստի ծառաներին հրամայեց բերանին զարկեն: Այն ժամանակ Պողոսն ասաց. «Բռեալ որմ, դու արտաքուստ գեղեցիկ ես երևում, բայց ներքուստ լիքն ես տգեղութեամբ, Աստուած էլ քեզ կզարկէ: Դու դատաւորական աթոռի վրայ ես նստել՝ օրէնքով դատելու, թէ՞ հակառակ օրէնքի խփել տալու ինձ»: Մօտիկ կանգնողներն ասացին. «Աստծու քահանայապետին ես հայհոյում»: Պողոսը պատասխանեց. «Եղբայրներ, ես չգիտէի, թէ նա քահանայապետ է, որովհետև օրէնքում գրուած է, թէ քո ժողովրդի իշխաններին չպիտի հայհոյես»: Եւ երբ Պողոսն իմացաւ, որ ներկայ եղողների մի մասը սաղուգեցի է, իսկ միւս մասը փարիսեցի, վերջիների կողմը բռնելով՝ ասաց. «Եղբարք, ես փարիսեցի եմ և փարիսեցւոյ որդի, ես դատուում եմ նրա համար, որ հանգերձեալ կեանք և յարութիւն մեռելոց եմ քարո-

զել»: Սրանից ետոյ սաղուկեցիների և փարիսեցիների մէջ երկպառակութիւն ընկաւ, որովհետև սաղուկեցիներն ասում էին, թէ ոչ յարութիւն կայ, ոչ հրեշտակ և ոչ հոգի, իսկ փարիսեցիք՝ երկուսն էլ դաւանում էին: Մեծ աղմուկ բարձրացաւ—մի քանի փարիսեցիներ պաշտպանում էին Պողոսին և ասում. «Ոչինչ յանցանք չենք գտնում այս մարդու մէջ, նա հակառակ այս ժողովրդի, հակառակ օրինաց և հակառակ տաճարի չէ քարոզել, իսկ թէ նա ճանապարհին Դամասկոս գնալիս ոգի է երևացել նրան կամ հրեշտակ ու դարձրել է նրան, շատ կարելի է ուղիղ է, ինչո՞ւ ենք մենք Աստծու հետ կռուում»: Երբ խռովութիւնը սաստկացաւ, հազարապետը երկիւղ կրեց՝ մի՞ գուցէ յարձակուեն և Պողոսին սպանեն, ուստի զինուորներին հրամայեց, որ զօրանոց տանեն նրան: Հետեւալ գիշեր Տէրը կանգնեց նրա մօտ և ասաց. «Քաջացիր Պօղոս, ինչպէս ինձ համար երուսողէմում վկայեցիր, այդպէս էլ պէտք է Հռոմում վկայես»:

բ. Դաւաճանութիւն Պողոսի դէմ

Հետեւալ օրը՝ մայիսի 19-ին քառասուն հոգի երդուեցին՝ չուտեն, չխմեն՝ մինչև որ Պողոսին չսպանեն: Դրանք եկան քահանայապետների, երեցների մօտ ու ասացին. «Մենք երդուել ենք

չուտել, չխմել մինչև Պողոսին չսպանենք: Դուք
ատենի անդամների հետ ասացէք հազարապե-
տին՝ Պողոսին նորից ատեան իջեցնէ, որպէս
թէ գործն ուղղում էք աւելի ճիշտ քննել, իսկ
մենք ճանապարհին կսպանենք նրան»: Պողոսի
քրոջ որդին լսեց այս դաւաճանութիւնը, զօրա-
նոց գնաց և եղելութիւնը պատմեց առաքեա-
լին: Սա էլ իրեն հսկող հարիւրապետի միջո-
ցով իմաց տուեց հազարապետին: Հազարապե-
տը պատանուց իմացաւ իրողութիւնը, արձա-
կեց նրան և պատուիրեց ոչ ոքի չասէ իրան
յայտնած գաղտնիքը, որպէսզի դաւաճանները
օգուտ չքաղեն: Անմիջապէս հարիւրապետնե-
րից երկուսին կանչեց և ասաց. «Գիշերուայ
ժամը 3-ին պատրաստ եղէք, որ Պողոսին կեսա-
րիա տանէք Փելիքս կուսակալի մօտ»: Հազարա-
պետը կուսակալին նամակ ևս գրեց, որի պարու-
նակութիւնն այս էր. «Այս մարդուն հրէաները
բռնել էին և քիչ էր մնացել սպանեն: Ես զի-
նուորներով վրայ հասայ, ազատեցի — վերջը յայտ-
նուեց, որ սա Հռովմայ քաղաքացի է: Ես կա-
մեցայ իմանալ սրա յանցանքը, ուստի հրամա-
յեցի ատեան տանեն քննելու: Քննութիւնից նը-
կատեցի, որ հրէաները մեղադրում էին սրան
իրանց օրէնքի դէմ մեղանշելու համար: Մեռ-
նելու կամ կապուելու արժանի ոչինչ յանցանք
չունի: Տեղեկացայ նոյնպէս, որ հրէաները նեն-

գութեամբ են վերաբերում դէպի այս մարդը
և մտադիր են ծածուկ սպանել, ուստի քեզ մօտ
ուղարկեցի և չարախօսներին էլ հրամայեցի, որ
զան քո առաջ խօսեն»: Զինուորները հրամանի
համաձայն Պողոսին գիշերով կեսարիա տարան:
Կուսակալը, երբ թուղթը կարդաց, ասաց. «Քեզ
կլսեմ, երբ քո դէմ չարախօսողներն էլ կգան»:
Կուսակալը հրամայեց Պողոսին տանել Հերովդէ-
սի պալատը և այնտեղ պահել:

Գ. Պողոսը կեսարիայում Փելիքսի առաջ

Հինգ օրից ետոյ՝ մայիսի 26-ին Պողոսի թըշ-
նամիները՝ Անանիա քահանայապետը իւր կու-
սակից ծերերի և մի ոմն ճարտարախօս Տերտու-
լիոսի հետ գնացին կեսարիա և ներկայացան
կուսակալին՝ յայտնելով որ Պողոսի դատի համար
են եկած: Ատեան կազմուեց: Ճարտարախօս
փաստաբան Տերտուլիոսը առաքեալին այսպէս
սկսեց ամբաստանել. «Մենք գտանք, որ այս
մարդը փրասակար է — մի երկրից միւսն է անց-
նում և իւր թունաւոր քարոզութիւններով ամեն-
ուրեք հրէաներին խռովում է: Իրան նազովրե-
ցու աղանդի առաջնորդ և ժողովրդի պաշտպան
է համարում: Մեր տաճարը կամեցաւ պղծել,
ուստի մենք էլ բռնեցինք և մեր օրէնքով կա-
մենում էինք դատել և եթէ այդ դատը տեղի էր
ունեցել, քեզ այժմ չէինք ձանձրացնի: Սակայն

Լիւսիաս հազարապետը եկաւ, բռնութեամբ խը-
լեց մեզնից սրան և նրա դատախազներին էլ
հրամայեց քեզ մօտ դալ, որ դու վերաքննելով
դատը՝ տեղեկանաս»։ Անանիան և իւր հետ ե-
կած ծերերը՝ խնդրին ոյժ տալսւ համար, միա-
բերան աղաղակեցին և վկայեցին, որ այդպէս է-
նք մի կողմը իւր ասելիքը վերջացրեց, կու-



սակալը միւս կողմին իրաւունք տուաւ խօսելու,
ուստի աւինակրեց Պօղոսին, որ պաշտպանէ ի-
րան։ Պօղոսը պատասխանեց. «Դու վեց տարի
այս ազգի դատաւորն ես. ճանաչում ես սրան.
դու հեշտութեամբ կարող ես ստուգել, որ 12
օր սրանից առաջ ես Կեսարիայից դուրս եկայ և
ուխտ գնացի Նրուսաղէմ։ Ինձ տաճարում չեն

տեսել մէկի հետ խօսելիս կամ ժողովրդի բազ-
մութիւնը գլխիս հաւաքած՝ խռովութիւն անե-
լիս։ Այդ կարճ ժամանակուայ մէջ ես ոչ մի
ժողովարանում չեմ եղել և ոչ քաղաքի մէջ մէ-
կի հետ խօսել եմ։ Իմ հակառակորդները ոչ մի
փաստով չեն կարող հաստատել ձեր առաջ յի-
շած ամբաստանութիւնները, դոքա լոկ խօսքեր
են, որ կրկնում են։ Այն եւս պիտի յայտնեմ
ձեզ, որ այն ճանապարհը, որով ես ընթանում-
եմ և որին նրանք հերձուած են համարում, որ
եւ Նազովրեցի Յիսուսի աղանդին եմ պատկա-
նում, այդ ճիշտ է։ Հէնց մեր նախահայր Աբ-
րահամի, Իսահակի և Յակովբի ճանապարհն էլ
այդ է եղել, որով նրանք պաշտել են Աստծուն
և այդ բանի մասին զրուած է օրէնքի և մար-
գարէութեան մէջ—ճիշտ է, ես այդ ամենին
հաւատում եմ։ Ինչ վերաբերում է նրան, թէ
տաճարը պղծել եմ, պիտի ասեմ, ես երկար տա-
րիներ օտար երկրներում եմ եղել, որից ետոյ
Նրուսաղէմ դարձայ։ Վերադարձին հետս էլ
տուրք՝ ողորմութիւն էի բերել Նրուսաղէմի աղ-
քատների համար, որովհետեւ հրէաներից բաղկա-
ցած մի խումբ քրիստոնեայ համայնք կար այն-
տեղ։ Միթէ բարեպաշտութիւնը արգելուած է։
Ճիշտ է տաճարում ես զոհ եմ արել և այնպէս
իմ պարտքը կատարել, միթէ սա անարգութիւն
է տաճարի համար։ Այդ զոհի ժամանակ Ասիա-

յից եկած մի քանի հրէաներ և ոչ թէ Անանիան և նրա հետ եկող վկաները, պատահեցին ինձ, բայց ոչ թէ ժողովրդի բազմութիւնը գլխիս հաւաքած խռովելիս, այլ զոհ մատուցանելիս: Եթէ ես մի այդպիսի յանցանք գործած լինէի, նրանք անշուշտ կգային քեզ մօտ և կբողոքէին ինձնից: Իսկական վկաներ չկան, իսկ քահանայապետը և ծերերը ինչո՞ւ ատենում հարցաքննութեան ժամանակ, ի ներկայութեան Լիւսիասի ինձ չմեղադրեցին և այդ բանում: Ընդհակառակն՝ ատենում ժողովականների մէջ հակառակութիւն տեղի ունեցաւ երբ ես ասացի, թէ հաւատում եմ մեռելների յարութեանը—դրա համար էք ի՞նձ դատի կանչել: «Փելիքսը լսեց Պօղոսի պատասխանը: Սա այն համոզումը կազմեց խնդրի վերաբերութեամբ, որ Պօղոսն արդար է, իսկ հրէաները նախանձից են զրգռուած սրա դէմ: Կուսակալը երեսպաշտ էր, չուզեց վիրաւորել հրէաների մեծամեծներին և վճիռ դնել խնդրին, այլ ասաց Անանիային և նրա հետ եկողներին, թէ երբ Լիւսիասը կգայ, ես կտեղեկանամ և այնպէս որոշում կտամ: Ուստի Փելիքսը, հրէաներին դուր գալու համար, հրամայեց Պօղոսին դարձեալ զինուորական հսկողութեան տակ պահել, իսկ միւս կողմից ազատութիւն տուաւ առաքեալին, որ ոչ ոքի չարգելեն նրան ծառայելու կամ նրա մօտ գալու:

Մի քանի օրից ետոյ Փելիքսը իւր կին Դրուսիլայի հետ, որ ազգով հրէայ էր, ծագումով Հերովդէս Ագրիպպա Լ-ի աղջիկը, Պօղոսին կանչեցին իւրեանց մօտ և ցանկացան քրիստոնէական հաւատի հետ մօտիկ ծանօթանալ: Երբ Պօղոսը խօսում էր արդարութեան, ժուժկալութեան և հանդերձեալ դատաստանի մասին, Փելիքսն այն աստիճան յուզուեց և երկիւղի տալաւորութեան ենթարկուեց, որ անմիջապէս պատուիրեց ընդհատել խօսքը—նա ասաց. «Դու այժմ գնա, երբ ժամանակ կունենամ, նորից կկանչեմ, որ շարունակես խօսքդ»: Փելիքսը յոյս ունէր Պօղոսից կաշառք ստանալ, դրա համար էլ յաճախ կանչում էր իւր մօտ և հետը խօսում:

Երկու տարուց ետոյ, այն է 60 թ. Փելիքսի տեղ եկաւ Փեստոս Պորկիոսը: Սա թէև համոզուած էր, որ հրէաների դատը Պօղոսի դէմ կարելի էր մերժել և իրան ազատութիւն շնորհել, բայց նրանց սիրտը շահելու համար՝ անմեղին կապած թողեց:


դ. Պօղոսը Փեստոսի առաջ

Պաշտօնն ստանձնելուց երեք օր ետոյ՝ Փեստոսը Կեսարիայից Երուսաղէմ գնաց իբրև նոր մարդ, որ տեղական հանգամանքների հետ ծանօթանայ: Քահանայապետը Պօղոսի հակառակորդ-

ների պարագլուխների հետ նոր կուսակալին ներկայացաւ և խնդրեց, որ առաքելին Երուսաղէմ կանչէ և իւր նախորդից անվճիւ թողած գործին վերջ դնէ։ Սրանց դիտաւորութիւնը նոյնն էր—վերադառնալիս ճանապարհին դարան մտած մարդիկը յարձակուեն Պօղոսի վրայ և սպանեն։ Բայց Փեստոսը գուշակեց նրանց միտքը, ուստի և ասաց. «Ես կարճ ժամանակից ետոյ պիտի վերադառնամ, թող գանգատաւորներն ինձ հետ գան, այնտեղ կդատենք և եթէ յանցաւոր գտնուի, ըստ այնմ էլ կպատժենք»։

Ութը, տասն օրից ետոյ Փեստոսը դարձաւ Կեսարիա։ Հետեւեալ օրն անմիջապէս ատեան կազմեց և հրամայեց Պօղոսին դուրս բերել։ Երուսաղէմից եկած դատախազները ծանր յանցանքներ բարդեցին Պօղոսի վրայ, բայց չնայելով գործ դրած ամեն մի աններելի միջոցներին և կեղծ վկաների սխալ ցուցմունքներին, այնուամենայնիւ ոչինչ չկարողացան ապացուցանել, որովհետեւ մեղադրեալը զօրաւոր կերպով հերքում էր, որ նա ոչ հրէից օրինաց, ոչ տաճարի և ոչ կայսեր դէմ որևէ յանցանք գործել է։ Փեստոսը հրէաներին հաճոյք պատճառելու մըտքով՝ չուզեց վճիռ տալ, այլ դարձաւ Պօղոսին և ասաց. «Որովհետեւ քեզ մեղադրում են, որ դու հայրենի օրինաց դէմ մեղանշել ես և տաճարը պղծել, իսկ սրանք այնպիսի խնդիրներ են, որ

հռովմէական օրէնքով որոշում չի տրուում, այս պատճառով չէիր կամենայ արդեօք Երուսաղէմ



գնալ և այնտեղ դատուել իմ ներկայութեամբ»։ Պօղոսը տեսաւ, որ Փեստոսը հաճոյանում է հրէաներին, քաջութիւն չունի իւր անմեղութիւ-

նը պաշտպանելու, ասաց. «Ես կայսերական ատենուհին եմ, այստեղ էլ պիտի դատուեմ: Հրէաներին ես ոչինչ չեմ արել, այդ ինքդ էլ քաջ գիտես, ուրեմն ինչ կարիք կայ ինձ Երուսաղէմ ուղարկելու: Եթէ ես փաստակար ոմն եմ և մահու արժանի որևէ յանցանք եմ գործել, թող դատուեմ, երկիրդ չունեմ մահու պատժից անգամ, իսկ եթէ հակառակորդներին մեղադրանքներն անհիմն են, այն ժամանակ ինձ ոչ ոք իրաւունք չունի սրանց յանձնելու—ես Հռովմայ քաղաքացի եմ, կայսեր բողոքելու իրաւունք ունեմ»: Այս համարձակ պատասխանը դուր չեկաւ կուսակալին: Պողոսի խօսքերը մի տեսակ սպառնալիք համարեց, թէ քեզնից կայսեր կըողոքեմ, ուստի Փեստոսը ժողով կազմեց իւր խորհրդականների հետ և այսպէս պատասխան տուաւ. «Երբ կայսեր բողոքելու իրաւունք ունես, կայսեր մօտ էլ կգնաս»:


Մի քանի օրից ետոյ Հրէաստանի թագաւոր Ագրիպպասը իւր Բերենիկէ կնոջ հետ Կեսարիա եկաւ ներկայանալու նորեկ կուսակալին և շնորհաւորելու նրա գալուստը: Որովհետեւ սրանք երկար ժամանակ մնացին այնտեղ, ուստի Փեստոսը Պողոսի գործի մասին թագաւորին այսպէս պատմեց. «Փելիքսի ժամանակից սկսած այստեղ մի բանտարկուած կայ: Երբ ես Երուսաղէմումն էի, քահանայապետները և հրէաների գլխաւոր-

ները խնդրեցին, որ այս մարդուն դատաւար տեմ: Ես տեղեկացայ գործի հետ: Նրանք մեղադրում էին սրան, որպէս թէ իրենց հայրենի օրէնքը չէ յարգել, տաճարը պղծել է և մի ոմն մեռած Յիսուսի մասին ասում է, թէ կենդանի է: Ես դժուարացայ այս խնդիրները քննելու, ուստի, առաջարկեցի Պողոսին Երուսաղէմ գնալ և այնտեղ քննուել: Վերջինս չցանկացաւ, իրաւունք համարեց իրան կայսեր բողոքելու, որպէս Հռովմայ քաղաքացի, ուստի ես էլ պահեցի, որ կայսեր ուղարկեմ»: Այն ժամանակ Ագրիպպասն ասաց Փեստոսին. «Ես ևս կկամենայի լսել այդ մարդուն»: Հետեւալ օրը Փեստոսը հրամայեց Պողոսին ներս բերել: Փեստոսն ասաց. «Ո՛վ Ագրիպպաս թագաւոր և դուք՝ ներկայ հանդիսատեսներ, հրէից ժողովուրդը թէ Երուսաղէմում և թէ այստեղ բողոքեց այս մարդուց և խնդրեց ինձ դատաւարտել սրան: Ես քննեցի նրանց բողոքը—երևաց, որ սա մահու պատիժ ստանալու յանցանք չէ գործել: Սա ևս իւր կողմից, որպէս Հռովմայ քաղաքացի, իրաւունք համարեց կայսեր բողոքելու: Ես ժողով կազմեցի իմ խորհրդականների հետ և որոշեցինք սրան Հռովմ ուղարկել: Ինձ ոչինչ յանցանք յայտնի չէ սրա մասին, որ ես կայսեր կարողանամ գրել, ուստի ձեր առաջը բերի, մանաւանդ քո, ո՛վ Ագրիպպաս թագաւոր, որ դուք վերաքննէք

դատը և ինձ միջոց տաք կայսեր մի բան գրելու: Ինձ անմիտ է թւում՝ կայսեր մօտ բանտարկեալ ուղարկել առանց յանցանքը յիշելու»:

Ագրիպպա թագաւորն ասաց Պողոսին. «Այժմ իրաւունք ունես քեզ պաշտպանելու համար խօսել»: Պողոսը բարձրացրեց ձեռը, որից շղթան կախուած էր և յունական լեզուով այսպէս սկըսաւ խօսել. «Այն ամենի մասին, որ հրէաները գանգատուում են ինձնից, ո՞վ Ագրիպպա թագաւոր, երջանիկ եմ համարում ինձ, որ այսօր քո առաջը պիտի պատասխան տամ, որովհետեւ դու տեղեակ ես հրէից կրօնին և ուղղութիւններին, ուրեմն և աւելի ձեռնհաս՝ ուղիղ դատաստան անելու, ուստի աղաչում եմ քեզ՝ համբերութեամբ լսել ինձ: Իմ մանկութիւնը Նրուսաղէմումն եմ անցկացրել, այս իրողութիւնը ծանօթ է բոլոր հրէաներին: Իմ անցեալ կեանքի մասին, եթէ կամենան, կարող են իրանք վկայութիւն տալ: Մեր կրօնի ճշմարտագոյն կուսակցութեան համեմատ՝ փարիսեցի եմ եղել: Այժմ ինձ մեղադրում են, որ ես հաւատում եմ այն աւետիքին, թէ Մեսսիան պիտի գայ, թէ Յիսուս մեր հայրերին խոստացուած Մեսսիան է: Ես երբեմն հալածում էի այդ Նազովրեցի Յիսուսի հաւատացեալներին: Դեռ այս ամենը փոքր համարելով՝ քահանայապետիցն էլ իրաւունք ստացայ Դամասկոս գնալու, որ այնտեղի

հաւատացեալներին ևս հալածեմ: Բայց, արքայ Ագրիպպա, կէս օրուայ ժամանակին ինչ տե-



սայ—երկնքից արեգակի լուսիցն աւելի պայծառ լոյս ծագեց իմ և ինձ հետ գնացողների չորս

կողմը: Մենք ամենք գետնի վրայ ընկանք, յանկարծ մի ձայն լսեցի, որ եբրայեցւոց բարբառով ասում էր. «Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ ես ինձ հալածում, խթանին հակառակ աքացելը դժուար է»: Ես հարցրի—դու ո՞վ ես: Ձայնը պատասխանեց, ես այն Յիսուսն եմ, որին դու հալածում ես, վեր կաց, ես քեզ ուղարկում եմ հեթանոսների մէջ, որպէսզի նրանց աչքերը բանաս և դէպի Աստուած առաջնորդես: Ուստի, ո՞վ Ագրիպպա թագաւոր, ես անհնազանդ չգտնուեցայ այն երկնային տեսիլքին, այլ՝ ամենից առաջ պատմեցի այս բանը Դամասկոսում, Երուսաղէմում, բոլոր Հրէաստանում և ապա հեթանոսներին, որ նրանք ապաշխարեն և դառնան դէպի Աստուածորդին և ապաշխարեն: Ահա, այս խօսակցութեանս համար հրէաներն ինձ տաճարում բռնեցին և կամենում էին սպանել: Բայց Աստուծոց ինձ օգնութիւն եկաւ և մինչև այսօր ևս կենդանի մնացած՝ վկայում եմ թէ փոքրին և թէ մեծին, որ Քրիստոս մեռելներից յարութիւն պիտի առնէ և լոյս քարոզէ հրէաներին և հեթանոսներին»:

Երբ Պօղոսը իւր պատաշխանը վերջացրեց, Փեստոսը բարձր ձայնով ասաց. «Քեզ մոռանում ես Պօղոս, շատ կարգալուց մոլորուել ես»: Պօղոսն ասաց. «Ես չեմ մոռանում ինձ, ո՞վ ազնիւ Փեստոս, այլ ճշմարտութիւն եմ խօսում:

Այս միևնույն բաները թագաւորն էլ գիտէ, որովհետև սա ծածուկ անկիւններում չէ կատարուած: Հաւատում ես մարգարէներին, ո՞վ Ագրիպպա թագաւոր: Գիտեմ որ հաւատում ես»: Այն ժամանակ Ագրիպպաը պատասխանեց. «Քիչ է մնում, որ ինձ ևս համոզես քրիստոնեայ լինելու»: Պօղոսն ասաց. «Աստուածանից կխընդրեմ, ոչ թէ միայն դու, այլ և բոլոր ներկայ եղողները ինձ պէս հաւատան, բացառութեամբ այս շղթաների»: Սրանից ետոյ վերկացան տեղերից թագաւորը, Բերենիկէն և նրանց հետ եղողները: Գնալիս իրար հետ խօսում էին և ասում. «Այս մարդը մեռնելու կամ կապանքի արժանի ոչինչ չէ գործել»: Իսկ Ագրիպպաը Փեստոսին աւելացրեց. «Կարելի էր արձակել, եթէ կայսեր բողոքած չլինէր»:

Ե. Ուղեւորութիւն դէպի Հռոմ

Ագրիպպասի խօսքերը չազդեցին Փեստոսի վրայ: Նա իւր նախկին որոշումը կամեցաւ ի կատար ածել երբ նա կայսեր բողոքել է, կայսեր մօտ էլ կգնայ: Առաքեալին մի քանի ուրիշ կապեալների հետ յանձնեցին Յուլիոս հարիւրապետին, որ Իտալիա տանէ: 60 թուի աշնանը Կեսարիայից նաւեցին դէպի Կրետէ կղզին:

Կրետէից դուրս գալով՝ տասն և չորս օրից ետոյ մօտեցան Անգրիական ծովին: Կէս գիշե-

րին նաւավարները կարծում էին, թէ մայր ցամաքին հասած կլինին: Բայց որպէսզի ստուգեն իրանց կարծիքը, արձձի գունտը ծովը նետեցին և տեսան, որ խորութիւնը 120 ոտնաչափ է: Փոքր ինչ էլ յառաջ նաւեցին: Երկրորդ անգամ չափեցին ծովի խորքը, երեսաց որ 90 ոտնաչափ է:

Այսպէս չափելով հասան մի տեղ, որ երկու կողմից էլ ծով էր, բայց խորը չէր: Նաւի առաջին մասը խրուեց ծանծաղուտի մէջ, իսկ ետևի մասը խորտակուեց կատաղի ալիքներից: Նաւը կործանման վտանգի մէջ էր: Զօրականները խորհուրդ արին բոլոր բանտարկեալներին սպանել, որպէսզի լողանալով չփախչեն: Հարկաւորապետը Պօղոսին ազատելու համար այս չար խորհուրդը խափանեց—հրամայեց լող տուողներին ջուրն ընկնել և ցամաք դուրս գալ, իսկ չիմացողներն էլ, որքան մի տախտակի կտոր, որքան մի փայտ բռնած՝ ամենքն էլ ցամաք դուրս եկան:

Տեղացիներից հարց ու փորձ արին և իմացան, որ այդ ցամաքը Մելիտինէ կամ Մալտա կղզին է: Նրանակը ցուրտ էր և անձրևային. կղզու բնակիչները սիրով ընդունեցին. խարոյկ վառեցին, որ տաքանան: Պօղոսը խոփ էր հաւաքում և կրակի վրայ դարսում: Յանկարծ մի սառած իժ տաքանալով՝ առաքեալի ձեռից կախ ընկաւ: Երբ բնակիչներն այս բանը տեսան, իրար ա-

սում էին. «Այս մարդն անշուշտ մարդասպան կլինի, սա թէև խեղդուելուց ազատուեց, բայց արդարադատութիւնը չի թողնում ապրելու»:



Պօղոսը թափ տուեց ձեռը, օձը կրակի մէջ ընկաւ: Կղզու բնակիչները կարծում էին, թէ Պօղոսի մարմինը կուռչի թոյնի ազդեցութիւնից:

յանկարծ վայր կընկնի և կմեռնի: Բայց երբ տեսան ոչինչ վատ հետևանք չունեցաւ, խօսքերը փոխեցին և ասացին. «Մա անշուշտ մի նոր աստուած կլինի»: Կղզու տէրը, որի անունը Պօպլիոս էր, երբ լսեց Պօղոսի հետ պատահած անցքը, խղճաց, ամենին էլ սիրով ընդունեց իւր մօտ և երեք օր հովանաւորեց: Պօպլիոսի հայրը



Չերմով պառկած հիւանդ էր: Պօղոսը նրա մօտ եկաւ, աղօթեց, ձեռք վրան դրաւ և բժշկեց: Այդ եղելութիւնն իսկոյն տարածուեց կղզում: Հիւանդներ էին բերում և Պօղոսը բոլորին էլ բժշկում էր: Կղզու բնակիչներն առաքեալին մեծ պատիւներ էին տալիս, իսկ հեռանալիս՝ ճանապարհի պաշար տուին:


Մալտայից նաւեցին Սիրակուզա, Հռեզիոն, Պատիոլուս քաղաքները: Այստեղ քրիստոնեաների հանդիպեցին, որոնք խնդրեցին մի շաբաթ իրանց մօտ մնալ: Յուլիոս հարիւրապետն իրաւունք տուաւ նրանց: Եօթն օրուայ հանգստից ետոյ ճանապարհ ընկան դէպի Հռոմ: Արդէն Պատիոլոսում եղած ժամանակ իմաց էին տուել Հռոմի քրիստոնեաներին Պօղոսի գալստեան մասին, այս պատճառով շատերն ընդ յառաջ էին եկել: Երբ Պօղոսը տեսաւ նրանց, գոհացաւ Աստուածանից: Մօտաւորապէս 61-ի մարտին Հռոմ հասաւ: Հարիւրապետը կապեալներին զօրապետին յանձնեց, իսկ Պօղոսին միւսների հետ զօրանոց չուղարկեց, այլ մի մասնաւոր բնակարան նշանակեց պահապան զինուորի հսկողութեան ներքոյ: Ըստ հռոմէական սովորութեան նրա ձեռք շղթայուած էր:

Գ. Պօղոսը Հռոմում

Հռոմ հասնելուց երեք օր ետոյ՝ Պօղոսը իւր մօտ կանչեց հրէաների գլխաւորներին և ասաց նրանց. «Եղբարք, ես հայրենի կրօնի հակառակ ոչինչ չեմ գործել, գուցէ այդպիսի լուրեր դիմամբ տարածած լինեն ձեր մէջ: Ծիշտ է ես Երուսաղէմում բռնուեցայ և մատնուեցայ հոռմայեցիների ձեռք: Փելիքս և նրա յաջորդ Փեստոս կուսակալների առաջ հարց ու փորձ արին

ինձ, բայց մահու արժանի պատիժ կրելու յան-
ցանք չգտան իմ մէջ, ուստի կամեցան ինձ ար-
ձակել: Բայց հրէաները բողոքեցին և ցանկանում
էին նորոգել դատը Երուսաղէմում: Կուսակալ
Փեստոսն էլ հակառակ չէր այս բանին: Ես չէի
կարող լռել, ուստի ստիպուեցայ կայսեր բողո-
քելու, բայց ոչ իմ ազգիցը շարախօսելու հա-
մար: Որովհետեւ կլինեն մարդիկ, որոնք ձեր
մտքերը կարող են պղտորած լինել և արատ դը-
նել իմ հայրենասիրութեան վրայ, այս պատճա-
ռով էլ ես ձեզ ինձ մօտ կանչեցի, որ անձամբ
խօսեմ ձեզ հետ և եթէ կհաւատաք ինձ, իմ դա-
տի մանրամասնութեան հետ կծանօթացնեմ—
խորայէլի յուսոյ համար եմ ես այս շղթան կը-
րում»: Նրանք պատասխանեցին և ասացին. «Քո
մասին մենք չըէաստանից ոչ թուղթ ենք ստա-
ցել և ոչ եղբայրներից մինը եկել, պատմել է
մեզ որեւէ չար բան: Քո բռնած դիրքը դէպի
հրէութիւնը մեզ շատ է հետաքրքրում, մենք քո
մասին տեղեկութիւն ունենք, այս պատճառով
ցանկալի էր քեզնից ևս լսել, թէ ինչ նպատակ-
ներ ունես, ինչ սկզբունքների ես հետևում: Մենք
լսել ենք այն Նազովրեցու աղանդի մասին, ո-
րին դու պատկանում ես, որ հրէաները ամեն
տեղ հակառակուել են քեզ այս խնդրում, այս
պատճառով էլ զարմանալու չի լինի, եթէ կաս-
կածանքով վերաբերուելու լինէինք դէպի քեզ»:

Սրանից ետոյ շատերը գալիս էին Պողոսի
մօտ: Նա քարոզում էր նրանց Աստծու արքա-
յութեան և խաչեալ Յիսուսի մասին: Առաւօտից
մինչև երեկոյ մարգարէներից և Մովսէսի օրէնք-
ներից վկայութիւններ էր բերում և համոզու մ



էր նրանց, որ Յիսուսը սպասուած ճշմարիտ
Մեսսիան է: Ոմանք հաւատացին Պողոսի խօս-
քերին, իսկ ոմանք՝ ոչ, ինչպէս սովորաբար շատ
տեղ պատահում էր: Անհամաձայնութիւն յա-
ռաջացաւ ունկնդիրների մէջ՝ այն աստիճան, որ
նոյն իսկ Պողոսի խօսքերին հաւատացողներին

չաջողուեց քրիստոնեայ դարձնել՝ մանաւանդ աւելի խանգարուեց զործը, երբ դուրս գնալիս առաքեալը հետեւեալ յանդիմանական խօսքերն աւսաց. «Սուրբ Հոգին եսայի մարգարէի բերանով մեր հայրերին աւսաց—գնա ժողովրդի մօտ և աւսա, դուք ձեր ականջներով կլսէք, բայց չէք հասկանայ, ձեր աչքերով կտեսնէք, բայց չէք ճանաչի: Այս ժողովրդի սիրտը թանձրացաւ, աչքերը խփեցին, որ չտեսնեն, ականջները ծածկեցին, որ չլսեն և սրտով չզգան, ետ դառնան և ես բժշկեմ նրանց: Այժմ յայանում եմ ձեզ, որ Աստծու փրկութիւնը հեթանոսների համար ուղարկուեց—նրանք լսում են և փրկւում»:

Պօղոսի դատը մնաց անվճիռ—նա մի տուն վարձեց, ուր երկու ամբողջ տարի ապրում էր: Իւր մօտ եկողներին սիրով էր ընդունում, քարոզում էր Աստծու արքայութեան մասին և ամենայն համարձակութեամբ ուսուցանում էր Յիսուս Քրիստոսի մասին:

64 թ. Ներոն կայսեր հալածանքների ժամանակ Պօղոսն էլ նահատակուեց—նրա գլուխը սրբով կտրեցին: Մի ուրիշ աւանդութեան համաձայն, նա բանտից ազատուել է, դարձեալ մի

քանի առաքելական ուղևորութիւններ է կատարել և աւետարանը քարոզել Սպանիայում: Մի այլ աւանդութեան համաձայն Պօղոսի մահը որոշւում է 67—68 թ.:



I. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

37623

		Գինն է զեղջ	
		Ռ.	Լ.
Առաին օրջան		%	
1. Ուղեցոյց	Հին—Ուլստի մասն Ա.	»	80 25
2. Ուղեցոյց	Հին—Ուլստի մասն Բ.	»	85 25
3. Ուղեցոյց	Նոր—Ուլստի մասն Ա.	1	»
4. Ուղեցոյց	Նոր—Ուլստի մասն Բ.	1	5
Միջին օրջան		35	
5. Դասագիրք	Կրօնի հատոր Դ.	1	50
6. Դասագիրք	Կրօնի հատոր Ե.	»	50
7. Տասն պատուիրան		»	50

II. ԱՇԽԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա. Ծխական դպրոցների համար

8. Դասատետր	Կրօնի Ա. տարի	»	25
9. Դասատետր	Կրօնի Բ. տարի	»	25
10. Դասատետր	Կրօնի Գ. տարի	»	25
11. Դասատետր	Կրօնի Դ. տարի	»	30 25

բ. Պետական դպրոցների համար

12. Դասատետր	Կրօնի Ա. տարի	»	25
13. Դասատետր	Կրօնի Բ. տարի	»	25
14. Դասատետր	Կրօնի Գ. տարի	»	30

գ. Ծխական և պետական դպր. համար

15. Հին—Ուլստ		»	50
16. Նոր—Ուլստ		»	50
17. Գործք—Առաքելոց		»	45

դ. Ցածկահայ դպրոցների համար

18. Հին—Ուլստ		»	45
19. Բարոյախօսութիւն (էթիկայ)		»	50
20. Մի քանի խօսք հայ կրօնուսույցներին		»	10 35

Ցանկացողները կարող են դիմել

1. Ինչ—Սահակ ա. քհ. Սահակեանց. Бедутовская 52.
2. «Գիր» և միւս հայ գրավաճառներին,
3. Պահատը «Գիր» գրավաճառանոցում:

Գինն է 45 ԿՈՊԵԿ

4

ՀՀ Ազգային գրադարան



NL0157372

